Ո՞վ է առաջինը վիրավորել՝ Ալեն Սիմոնյանը, իսկ նրանք հակադարձել են: Ստացվում է, որ Հայաստանում ձեւավորվել են բռնապետական կարգեր, ով ում ուզում, ինչքան ուզում, ձերբակալում է, կալանավորում է, բայց վարչապետը, ԱԺ նախագահն իրավունք չունեն ինչ-որ մեկին բերման ենթարկելու հրաման տալու: Նրանք թագավոր չեն:

Կարդացեք՝ էջ 4

Չսերտած դասերի համար թանկ գին են վճարում եւ զոհերը, եւ դահիճները: Շատ ժողովուրդներ են անցել (ու շարունակում են անցնել) բռնապետության քավարանը: Արեւմուտքը Հայաստանում էլ է նույն սխալը գործում՝ մնայուն արժեքները ստորադասելով վաղանցիկ կայունությանը: Այս realpolitic-ի շահառուներն են նաեւ ՔՊ-ականները:

Կարդացեք՝ էջ 6

Սահմանամերձ գյուղերից մեկի քիմիայի բազմավաստակ ուսուցչուհին 4-րդ անգամ է «կտրվել» կամավոր ատեստացիայից: Նա շատ հարգված է դպրոցում, նրա սաները տարիներ շարունակ բուհեր ընդունվելիս ցուցաբերել են հիմնավոր գիտելիքներ եւ քիմիայից ստացել բարձր միավորներ, պարզվում է՝ չի բավարարում ատեստացիայի պահանջները:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 183 (4085), 15 նոյեմբեր, շաբաթ, 2025

www.hraparak.am

ԱԺ փոխնախագահ, Փաշինյանի վաղեմի զինակից Հակոբ Արշակյանն այնքան է վիրավորված թիմից, որ մինչ այս պահը 2026 թ. ընտրացուցակում ընդգրկվելու հայտ չի ներկայացրել: Նրա մտերիմները պատմում են, որ Արշակյանը մտածում է չառաջադրվել, եթե, իհարկե, ֆորսմաժոր չլինի, եւ չպարտադրեն: Մեզ հետ զրույցում Արշակյանն ասաց, որ մինչ այս պահը չի առաջադրվել, իսկ կառաջադրվի, թե ոչ՝ հրաժարվեց պատասխանել: Հիշեցնենք, որ սեպտեմբերին կայացած ՔՊ համագումարին նրան թույլ չտվեցին մասնակցել՝ 30 հազար դրամ կուսանդամավարձը չվճարելու պատրվակով: Սակայն, ասում են, Արշակյանն ամեն ինչի հետ չէ, որ համաձայն է եւ երբեմն անգամ չի խորշում դեմ գնալ Փաշինյանին: Մեզ ասացին նաեւ, որ բավականին թվով ՔՊ-ականներ կան, որոնք թեպետ գիտեն, որ շանս չունեն եւ 500 հազար դրամը ջուրն են գցելու, բայց Փաշինյանի ահից՝ ստիպված առաջադրվում են, որ գլխացավանքի մեջ չընկնեն: Նշենք, որ ՔՊ-ն «գլխագին» է պահանջում առաջադրվող թեկնածուների համար. կես միլիոն դրամ՝ ՔՊ-ականներից, 1.5 մլն՝ անկուսակցականներից: Նոյեմբերի վերջին կավարտվեն առաջադրումները, հետո նախ ցուցակները կզննի ու կզտի ՔՊ վարչությունը, իսկ հետագայում համագումարով՝ քվեարկությամբ կկազմվեն ցուցակների վերջնական տարբերակները: Գումարները վճարում են հենց առաջադրման փուլում, անկախ նրանից՝ հետագայում կընտրվեն, թե ոչ, գումարը հետվերադարձման ենթակա չէ:

Եկեղեցու եւ բարձրաստիճան հոգեւորականների դեմ իր արշավի շրջանակներում կարգալույծ քահանայի ձեռամբ մատուցված 2 պատարագի մասնակցելուց հետո Փաշինյանը, թերեւս, հույս ուներ, որ գործող քահանայի պատարագին մասնակցելը կփրկի իրավիճակը, կարող են հնարավորինս շատ մարդիկ գալ պատարագին: Ինքն էլ, դրանից օգտվելով, առաջ կտանի կաթողիկոսին գահընկեց անելու ծրագիրը, որի «տակ է մնացել»: Սակայն Թալինի եկեղեցում ավելի սակավաթիվ էին, քան նախորդ 2 պատարագներին՝ Հովհաննավանքում: Այս շաբաթ էլ ՔՊ հավատաքննիչները Վայոց Ձորի Խաչիկ գյուղի եկեղեցի են գնալու: Եթե աշխարհագրության նման փոփոխությունն էլ արդյունք չտա, ստիպված կլինեն կրկին փոխել մարտավարությունը: Մեզ ասացին, որ Փաշինյանը մտադիր է այցելել հանրությանը հայտնի եւ հավատացյալների կողմից ընդունելի հոգեւոր սպասավորների, ուստի դիտարկում են Տաթեւի վանական համալիրի հոգեւոր հայր Տեր Միքայելի թեկնածությունը: Կարծում են, որ եթե հարգված հոգեւորականներին ստիպեն ընդունել նրան, հնարավոր կլինի փոխել այս արշավի նկատմամբ վերաբերմունքը:

Կասկածները հաստատվում են

Դեռ 2023-ի սեպտեմբերին հիմնավոր կասկածներ կային, թե ինչպես հայտնվեցին Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները Ադրբեջանի բանտում: Այն ժամանակ էլ շշուկներ կային, որ գերի տարվողների ցուցակի կազմմանը մասնակցություն է ունեցել նաեւ Նիկոլ Փաշինյանը, իսկ վերջերս Սերժ Սարգսյանն արդեն բացահայտորեն խոսեց այդ մասին: Իհարկե, դրա մասին վկայող իրեղեն ապացույցներ չկան, բայց բազմաթիվ նրբություններ վկայում են այդ մասին: Առաջին կասկածը բխում էր նրանից, թե ինչպես կարող էին իքս մարդիկ չլինել այդ ցանկում, որոնք, ենթադրաբար, Ադրբեջանին շատ են ցավեցրել, իսկ հայտնվեր, օրինակ, ԱԺ նախագահը, տարիներ առաջ պաշտոնավարած ՊԲ հրամանատարը, Ադրբեջանի հետ աշխատանքային հարաբերություններ պահած Արայիկ Հարությունյանը: Հաջորդ կասկածը, անշուշտ, բխում էր նրանից, թե ինչպես է ՀՀ իշխանությունը համառորեն շրջանցում այս թեման, իսկ որոշ դեպքերում՝ անգամ միտումնավոր ձախողում այն: Եվ, վերջապես, ինչ կաներ անաչառ եւ այդ անձանց գերեվարման մեջ չշահագրգռված վարչապետը: Նախ, այսքան զիջումների գնալու պարագայում գոնե գերիների վերադարձի հարցը կպնդեր ու կհասներ դրան: Վաշինգտոնում կբարձրացներ այդ հարցը եւ ցանկացած հարթակից ելույթ ունենալիս, ցանկացած հանդիպման մասնակցելիս կդիմեր արտերկրի իր գործընկերներին՝ խնդրելով-պահանջելով, որ այդ հարցը լուծվի: Ոչ թե Ալիեւին ու Էրդողանին գետնատարած ու ժպտադեմ կսիրաշահեր, կինն էլ՝ նրանց կանանց, այլ կխոսեին այս մասին, կպնդեին, որ ոչ մի խաղաղության հնարավոր չի լինելու հասնել, եւ ոչ մի միջանցք չի կառուցվելու, մինչեւ մեր գերիները տուն չվերադառնան: Վերջապես, յուրաքանչյուր աղոթքի նախաճաշ ու համաժողով կսկսեր ժամանակակից աշխարհում գերիների անթույլատրելիության մասին խոսքով եւ նրանց ուղղված աղոթքով:

Մի ժամանակ Նիկոլ Փաշինյանն այցելում էր բուհեր եւ ներկայացնում իր «Իրական Հայաստանի» տեսլականը՝ լվանալով ուսանողների եւ դասախոսների ուղեղները: Հիմա նոր բան է մոգոնել. այցելում է տարբեր համայնքներ, ասենք՝ Արաբկիր կամ Մալաթիա-Սեբաստիա, եւ տվյալ համայնքում ապրող, տարբեր բուհերում սովորող ուսանողներին եւ աշխատող դասախոսներին են հիմա էլ իրենց համայնքում նրա հետ հանդիպման ուղարկում: Վերջին նման հանդիպումը Մալաթիա-Սեբաստիա համայնքում է կայացել, մոտ մեկ ժամ բանախոսել է Փաշինյանը, ապա պատասխանել հարցերին: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչ հարցեր են բարձրացնում ուսանողները, արդյո՞ք սուր, օրախնդիր հարցեր են տալիս վարչապետին, չէ՞ որ ամբողջ աշխարհում ուսանողությունը հասարակության ամենաակտիվ եւ ամենաընդդիմադիր խավն է համարվում: Այդ հավաքներին մասնակցած անձը մեզ ասաց, որ բացառապես հարցեր են տալիս բուհական կրթությունից, քննություններից, ոչ մի քաղաքական հարց չի հնչում:

ՔԱՍՏԻՆԳԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ Է

Վերջին շրջանում ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանի նկատելի պասիվության ֆոնին ակնառու է դարձել փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանի գերակտիվությունը՝ ոչ միայն ԱԺ նիստերի դահլիճում՝ ընդդիմադիրների հետ շփումներում, այլեւ՝ համացանցում: Նա դարձել է ամեն ինչի մասնագետ եւ ամեն օր իր հեղինակավոր կարծիքն է ներկայացնում: Թիմում Ռուբինյանի պահվածքն ընկալվել է որպես հայտ՝ ԱԺ նախագահի պաշտոնում, հաջորդ ժամկետի համար: Կարծիք կա, որ Փաշինյանը քաստինգ է հայտարարել այդ պաշտոնի համար եւ թեկնածուների փնտրտուք է սկսել: Չափանիշներն են՝ իրեն հավատարմությունը, իր որոշած թիրախներին թունդ հայհոյելը, իր ձեռնարկած միջոցառումներին ակտիվ մասնակցելը, եւ հիմա սկսվել է ինքնառաջադրման փուլը: Սակայն ՔՊ-ում համոզված են, որ Ռուբինյանը «չի ձգում» այդ պաշտոնի համար. նա աչքի է ընկնում իր հախուռն, կոնֆլիկտային բնավորությամբ եւ չի կարող օրենսդիր կառույցը ղեկավարել: Մյուս թեկնածուն ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն է, սակայն նա էլ շատ է վարկաբեկված: ՔՊ-ում որոշել են, որ Փաշինյանի սրտի թեկնածուն այս պահին ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան Լիլիթ Մակունցն է, որը Փաշինյանի կաբինետի գորշ կարդինալներից է եւ հիմա կուսակցական աշխատանքներով է զբաղված: Այս ենթադրությունը բխում է նաեւ այն սիրուց, որ Փաշինյանը տածում է կին պաշտոնյաների նկատմամբ:

ՎԵՐՋԻՆ 1 ՇԱԲԱԹՈՒՄ ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՄԱՍՆԱԿԻՑ ԷՐ ԸՆԹՐԻՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԸՆԹՐԻՔ

Վարչապետի կնոջ պլանավորած բարեգործական ընթրիքը, որը ոչ մի կերպ չէր կազմակերպվում, քանի որ ցանկացողները քիչ էին, վերջապես կայացավ նոյեմբերի 12-ին: «Իմ քայլը» հայտնում է, որ ընթրիքից գոյացած հասույթը տրամադրվելու է «Միմյանցից ոգեշնչված» նախագծին, այսինքն՝ արդեն հարստացածները հարստացնելու են այդ մասին առայժմ երազողներին, այսինքն՝ էլի սկսնակ կանանց: Իր ՖԲ էջում Աննա

Հակոբյանը գրել է, որ այս ծրագրի համար հիմնադրամը հավելյալ 350-400 միլիոն դրամի կարիք ունի, քանի որ, ըստ նրա, այդ գումարով հայտատուների 70 տոկոսին, այսինքն՝ 300-350 կնոջ, կհաջողվի հաղթահարել ծրագրի փուլերը, եւ նրանց ու նրանց ընտանիքի ապագան մեծապես կփոխվի:

Վերջին 1 շաբաթում ընդամենը 2 մասնակից էր հայտ լրացրել: Ընթրիքից մեկ շաբաթ առաջ՝ նոյեմբերի 5-ին, վարչապետի կինն իր ՖԲ էջով նույնիսկ հոխորտացել էր լրագրողների վրա, որոնք «միասնական ջանքերով» արժեզրկեցին այն՝ դարձնելով «Մի միլիոն դրամ կտամ՝ Աննա Հակոբյանի հետ հաց ուտելու համար» սեւ հարց: «Լրագրողները տրորեցին բոլոր նրանց, ովքեր մասնակցեցին նախորդ ընթրիքներին, այդպիսով ապահովելով հաջորդ մասնակիցների «զգուշավորությունը»»,- գրում է Աննա Հակոբյանը՝ հիշեցնելով մեզ, որ 528 կին «սրտի թրթիռով սպասում է իր պահին», բայց ընթրիքը ոչ մի կերպ չի կայանում:

«Իմ քայլը» յուրաքանչյուր ապագա կամ բիզնեսի ճանապարհին ամրապնդվել ցանկացող բիզնեսմեն կնոջ տալիս է 1-2 մլն դրամի չափով դրամաշնորհ, որով կարող ես, ասենք, ֆրեշի կամ բաժակով պաղպաղակի ապարատ գնել կամ էլ տարածք վարձել, ֆեն ու մկրատ գնել ու մազ կտրել, այն էլ՝ ոչ թե կենտրոնում, այլ՝ ծայրամասում, կամ էլ ձեռքի աշխատանքներ պատրաստել, տանել Վերնիսաժ, կանգնել վաճառել: Այսպիսի բիզնեսն ավելի շատ ռիսկեր է առաջացնում, քան սրտի թրթիռ ու հաստատ չի կարող «մեծապես ապագա փոխել»: Մանավանդ, որ մինչեւ այդ 1-2 մլն-ն ստանալը դեռ պետք է «Իմ քայլում» կրթվես, մասնակցես տարբեր «միջոցառումների», գուցե՝ նաեւ լսես Աննա Հակոբյանի ու նրա ամուսնու դասախոսությունները, «Կրթվելը նորաձեւ է» շարժմանն «անդամագրվես»: Այսինքն՝ դու էլ վճարես այդ 1-2 միլիոնի համար:

Այնպես որ, մենք՝ լրագրողներս, Աննա Հակոբյանի «փողային» ընթրիքները հարամողներս, այնքան էլ մեղավոր չենք՝ մարդիկ իրենք չեն ցանկանում մասնակցել: Մանավանդ որ հոխորտալուց մի քանի օր անց «Իմ քայլը» պաթոսով հայտարարում է, որ ընթրիքը կայացել է եւ մեծ հաջողություն արձանագրել: «Այս տարվա բարեգործական ընթրիքը նշանավորվեց ... նրանով, որ ծրագրի նվիրատվության ընդհանուր թիվը կրկնապատկվել է, ինչը փաստում է, որ մեր առաքելությանը հավատացողների, հիմնադրամին սատարողների, հիմնադրամի գործունեությունը բարձր գնահատողների թիվն աճել է: Դիմումների թիվը եւս աննախադեպ աճ է գրանցել: Հիմնադրամին դիմել են 529 կին ձեռներեցներ, որոնցից 421-ը՝ Հայաստանի տարբեր մարզերից, իսկ 108-ը՝ Երեւանից»,- ասում է «Իմ քայլը»: Հաղորդվում է, որ այս տարի նվիրատուներից ընթրիքին մասնակցել են 44 կայացած գործարար, մշակութային, սոցիալական եւ կրթական ոլորտի ներկայացուցիչ: Այս 44 թիվն ասես հետապնդում է իշխանական զույգին: 44-օրյա պատերազմ, 44 գործարար, 44 գրառում՝ Եկեղեցու ներքին կյանքին միջամտելու ու օրինական գործունեությունը խոչընդոտելու՝ Հովհաննես Իշխանյանն է քանակը հաշվել:

Մասնակիցների թիվը կրկնապատկվել է, բայց արդյո՞ք գումարն էլ է կրկնապատկվել, որքա՞ն գումար կարողացաք հավաքել, ովքե՞ր էին մասնակցում ընթրիքին, որքա՞ն է նվիրաբերել յուրաքանչյուր մասնակից: Այս հարցերի պատասխանները փորձեցինք ստանալ հիմնադրամից: Բայց «Իմ քայլը» լրագրողներիս մեջ պոտենցիալ վտանգ է տեսնում եւ նախընտրում է մեզնից թաքցնել անգամ պարզ տեղեկատվությունը: Մենք զանգահարեցինք հիմնադրամ, մեզ խոստացան կապել պատասխանատուի հետ, բայց մնացինք սպասող:

Իսկ ընթրիքից հետո տիկին Աննայի ու լրագրողների միջեւ անդունդն ավելի է խորացել: Փոխանակ պատմենք, թե ինչ երջանիկ են դառնալու կանայք՝ տիկին Աննայի օգնությամբ իրենց բիզնեսը զարգացնելու հնարավորություն ստանալով, ֆիքսվել էինք նրա հագուկապի վրա, այնպես, որ հիմնադրամը ստիպված էր պարզաբանում տարածել Աննա Հակոբյանի «բորդո գույնի» փայլփլուն շորի մասին, որը, ըստ տիկնոջ, ոչ թե աշխարհահռչակ թուրքական բրենդից է, ինչպես գրել են ՁԼՄ-ները, այլ հայ դիզայներ Մանուկ Ալեքսանյանի ստեղծած զգեստն է, ուղղակի շատ է նման թուրքական բնօրինակին: «Հրապարակն» էլ արձանագրել էր, որ Աննա Հակոբյանի ընթրիքին մասնակել ու նրա հետ նկարվել են օրենքով գող Արսեն Մկրտչյանի՝ Արսեն Երեւանսկու կինն ու դուստրը, որոնք արդեն մի քանի տարի է՝ աշխատեցնում են «Նայեք, աղջիկներ ջան» խանութը:

Հնարավո՞ր է այսօրվա Հայաստանում 1-2 մլն դրամով հաջողակ բիզնես հիմնել: Հարցն ուղղեցինք կին բիզնեսմեն, ավտոպահեստամասերով զբաղվող Անի Մ.-ին: «Մասշտաբային բիզնես չես կարող, հաստատ: Ասենք, տնավարի ինչ-որ մի բան կարող ես արտադրես, վաճառես»: Արդեն 5 տարի է՝ այդ բիզնեսի մեջ եք, երբեւիցե դիմե՞լ եք Աննա Հակոբյանի հիմնադրամին: «Ինձ համար այսպես է՝ եթե մի բան տալիս են, անպայման տեղը հանում են, դու դառնում ես իրենց պարտական: Դրա համար ես խուսափում եմ պետական ամեն ինչից ու չեմ էլ ուզում, որ ինձ նկատեն, անկեղծ ասած»,- պատասխանեց գործարար կինը: Մի հայտնի ճշմարտություն էլ կա՝ փոքր բիզնեսը զարգանում է այնտեղ, որտեղ պետությունը չի խառնվում: Իսկ Հայաստանում փոքր ու միջին բիզնեսը՝ կին, թե տղամարդ, սկսնակ կամ փորձառու բիզնեսմեն, փակման եզրին են պետության կոշտ հարկային քաղաքականության, խոշորների հետ դաժան մրցակցության հետեւանքով: Բայց այս մասին ո՛չ Աննա Հակոբյանը, ո՛չ նրա ամուսինը, իհարկե, չեն մտածում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՅՍՔԱՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ, ՈՐ ՀԱՍՑՐԵԼ ԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ԲՈՒՄԵՐԱՆԳՈՎ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

«Իմնեմնիմի» փոդքաստի հեղինակներ Վազգեն Սաղաթելյանն ու Նարեկ Սամսոնյանը երկու ամսով կալանավորվեցին: Փոդքաստին օրեր առաջ հյուրընկալվել էր երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը: Այդ հարցազրույցից հետո Ալեն Սիմոնյանը գրառում էր արել՝ Վազգեն Սաղաթելյանի ու Նարեկ Սամսոնյանի հասցեին ասելով «շան լակոտներ»: Դրանից հետո «Իմնեմնիմի» փոդքաստի հաղորդավարները Ալեն Սիմոնյանին անվանել էին «անասուն», բ-ի տղա, նրա մոր հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ էին հնչեցրել, ինչն իրավապահները գնահատել են որպես խուլիգանություն եւ սպառնալիք: Իրավապաշտպան **Նինա Կարապետյանցը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով միջադեպին եւ դրան վերագրվող հոդվածներին, նկատում է. «Եթե խոսքը խուլիգանության կամ սպառնալիքի մասին է, ապա այս նույն հանցակազմով առաջին ատյանի դատարանն ունի հրապարակած վճիռ, որում ասվում է, որ նրանց արարքի մեջ չկա հանցակազմ: Հետեւաբար իրավաբանները, մասնագետները այս ամենի գնահատականը տվել են վաղուց: Այլ խնդիր է, որ մենք չունենք առողջ արդարադատական համակարգ, եւ շատ հնարավոր է, որ կգտնեն մի այնպիսի դատավորի, որը հակառակ տեսակետ կարող է հայտնել: Նիկոլ Փաշինյանի «բարեփոխած» դատարանն արդեն իսկ տվել է գնահատականը, հետեւաբար, այս հարցում երկար խոսելու բան չկա, ամեն ինչ պարզ է»:

Նա անդրադարձավ նաեւ եթերից հնչող հայհոյանքներին, ինչպես նաեւ՝ ֆեյսբուքյան վիրավորանքներին. «Դատապարտելի՞ են արդյոք վիրավորանքը, հայհոյանքը, նվաստացումը, ատելության խոսք տարածելը, թե՞ ոչ: Այո, խիստ դատապարտելի են, բայց դա կարող եմ ասել ես, նման իրավունք ունեն ինձ նման մարդիկ, ովքեր որեւէ մեկին անձնական վիրավորանք, հայհոյանք չեն հնչեցնում, հետեւաբար՝ դատապարտում են բոլոր կողմերին: Բայց եթե մարդը հրաման է տալիս՝ ընդդիմադիր քաղաքացու ձեռքերից բռնեն, եւ ինքը թքում է այդ քաղաքացու դեմքին, մարդիկ, ովքեր Ազգային ժողովի ամբիոնից կարողանում են սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնել, անթույլատրելի վարքագիծ են դրսեւորում, անում են քայլեր, որոնք ոչ միայն հակասահմանադրական են, այլեւ հակաբարոյական են, այդ մարդիկ չեն կարող խոսել: Եթե իրենք հայհոյում են, ինչի՞ վրա են հույսները դրել, որ իրենց փոխադարձ չե՞ն հայհոյելու: Եթե դու ուզում ես ադեկվատ ու քաղաքակիրթ վարքագիծ տեսնել, ապա ինքդ պետք է այդ գիծը պահողը լինես. խոսքն իշխանության մասին է: Այդ նրանք պետք է ցույց տան, թե ցանկալի եւ թույլատրելի վարքագիծը որն է: Նրանք իրենց վարքագծով հասարակությանը մեսիջ են ուղարկում, որ քֆուր տալը, անպարկեշտ խոսքեր հնչեցնելը, մարդկանց ինտիմ կյանքի վերաբերյալ տեղեկություններ տարածելը նորմալ երեւույթներ են, անգամ սեփական թիմակիցների հանդեպ են այդպես վարվում, բայց երբ իրենց է վերադառնում այդ ամենի բումերանգը, զարմանում են….»:

Ինչո՞ւ հայհոյանքը 2018-ից հետո դարձավ այսքան պոպուլյար: «Այն ժամանակ ամեն ասածդ խոսքի համար գլխովդ պիտի պատասխան տայիր, անկախ այն բանից՝ աղջիկ ես, թե՝ տղա: Բակում խաղացող երեխաներից սկսած, մինչեւ ամենաբարձր պաշտոնյա այն ժամանակ խոսում էր մտածված, ամեն մեկի խոսքն ուներ արժեք, այսօր ոչ մեկի խոսքը չունի արժեք: Այո, հայհոյանքը սկսեց տարածվել շատ արագ: Բլոգերներն էլ իրենց հերթին դրան նպաստեցին, սակայն մի բան է, երբ բլոգերն է իր էջում՝ լսարանի առաջ հայհոյում, մեկ այլ բան է, երբ երկրի ղեկավարն է դա անում: Գալիս էին սեր ու համերաշխություն տարածելով, սակայն տարածեցին չարություն ու թշնամանք, եւ ամեն ինչ բումերանգի նման վերադառնում է իրենց: Այս իշխանության համար ես շատ վատ լուր ունեմ: Այսքան հայհոյանք տարածելը չի կարող իրենց համար անպատասխան մնալ: Իրավապահ գործիքներն իրենց ձեռքում են, սակայն իրենց հաշիվ չեն տալիս, որ իրենց սրած մախաթը հայտնվելու է համապատասխան տեղում: Շատ ծանր է դա լինելու: Այսքան վիրավորանք, այսքան նվաստացում, որ հասցրել են հայ ժողովրդին, անպատկերացնելի է: Ժողովրդին ու ԱԱԾ աշխատակիցներին եւս նվաստացնում են՝ ստիպելով կատարել հակասահմանադրական գործողություններ: Այս ամենը չի մնալու անպատասխան: Կա՛մ այս մարդիկ չեն հասկանում, թե ինչ են անում, կա՛մ էլ նախկին իշխանությունների պես մտածում են, թե իրենք հավերժ են, սակայն հավերժ ոչինչ չի լինում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՅԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՄԵՆՔ Ո՞ՒՐ ԵՆՔ ԳՆԱԼՈՒ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՈՒԶՈՒՄ ԵՆ ՔՇԵԼ՝ ԲԱՔՈ՞Ի ԳՆԱԼ

«Հնարավոր է, որ արտահերթ սահմանազատվելիք հատվածներ լինեն՝ կապված TRIPP նախագծի հետ»,- 2 օր առաջ խորհրդարանում հայտարարեց փոխվարչապետ Միհր Գրիգորյանը եւ հիշեցրեց՝ ադրբեջանական կողմի հետ վերջին հանդիպումը սեպտեմբերի սկզբին էր եւ կապված էր TRIPP նախագծի հետ: Մուստաֆաեւն ու Գրիգորյանն այցելել էին Սյունիքի մարզի եւ Զանգելանի շրջանի հարավային հատված, իսկ մեր աղբյուրներն ասում էին, որ այդ հանդիպումն Արցախում է եղել: «Մենք այցելեցինք միասին հարավ եւ Ադրբեջանի տարածք, բայց դա հիմնականում կապ ուներ TRIPP-ի հետ կապված սահմանազատման հնարավոր ֆրագմենտների եւ գործընթացի հետ, որն ուղղակիորեն կապ կունենա ենթակառուցվածքների լոկացիայի հետ»,- ասաց փոխվարչապետը:

Ի դեպ, սեպտեմբերին, երբ նոր էր ստորագրվել վաշինգտոնյան համաձայնագիրը, որով պայմանավորվածություն է ձեռք բերվել Թրամփի ուղու վերաբերյալ, ճանապարհի երկարության տարբեր թվեր էին շրջանառվում. մի մասը նշում էր 42 կիլոմետրանոց միջանցքի մասին, մյուսները՝ 43,5 կմ, ավելի վաղ՝ 32 կմ: Մասնավորապես, Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպան Թոմաս Բարաքը հայտարարել էր. «Հայաստանն ու Ադրբեջանը վիճում են 32 կիլոմետր երկարություն ունեցող ճանապարհի շուրջ»:

Բանն այն է, որ Ադրբեջանը համարում է, որ դելիմիտացիայի արդյունքում Նռնաձորի հատվածում մոտ 10 կմ-ի հասնող հատվածն իրենով է անելու, դա ադրբեջանական տարածք է համարում, այդ պատճառով էլ հնչում էր նաեւ 32 կմ թիվը: Եվ պատահական չէ, որ հայտարարողներից մեկը Թուրքիայում ԱՄՆ դեսպանն էր: Կան տեղեկություններ, որ թեպետ Ադրբեջանը որոշել էր մինչեւ 26 թ. ընտրությունները հետաձգել Փաշինյանի համար «ցավոտ հարցերը», խոսքն անկլավների վերադարձի անվան տակ Տիգրանաշենն ու այլ տարածքներ հանձնելու մասին է, ինչպես նաեւ ադրբեջանցի փախստականների՝ Հայաստանում բնակվելու, սակայն Փաշինյանի իշխանության գահավիժող վարկանիշը, ասում են, մտահոգում է Ադրբեջանին, եւ այնտեղից պահանջում են, որ հնարավորինս շուտ լուծում տրվի կամ անկլավների թեմային, կամ Թրամփի ուղուն: Սրանով է պայմանավորված, որ օրեր առաջ Փաշինյանն Արծվաշենը ետ բերելու թեման օրակարգ բերեց, բայց թերեւս հասկանալով, որ ընտրություններից առաջ չի կարող մարսել Տիգրանաշենի հանձնումը, վերադարձավ ավելի անշառ՝ Թրամփի ուղուն, որն իրականում «Զանգեզուրի միջանցք» ասվածն է:

Փաշինյանը խորհրդարանում վերջին հարցուպատասխանի ժամանակ խոստացավ մինչեւ տարեվերջ ներկայացնել Թրամփի ուղու ճանապարհային քարտեզը, իսկ հաջորդ տարվա երկրորդ կեսին սկսել բուն շինարարությունը: Երեկ՝ «Խաղաղության խաչմերուկ. զարգացնելով տարածաշրջանային հաղորդակցությունները» խորագրով համաժողովի ընթացքում Փաշինյանը ներկայացրեց այդ ճանապարհային քարտեզը: Ասաց, որ TRIPP նախագծի իրագործման առաջին գործողությունը, որի վրա «աշխատում են», նաեւ պիտի ցույց տա, թե ինչպես է իրականացվելու նախագիծը, կանոնակարգման գրավոր բազա պետք է ստեղծվի. «Այդ բազայի ստեղծման առաջին փուլը Վաշինգտոնի հռչակագիրն է, որտեղ ընդհանուր շրջանակը նկարագրված է»:

Հաջորդիվ ԱՄՆ-ն ու Հայաստանը համատեղ իրավաբանական անձ են ստեղծելու, որը կլինի ՀՀ-ԱՄՆ համատեղ ընկերություն, տնօրենների խորհուրդ, որը կկառավարի ընկերությունը, եւ որում ներկայացված կլինեն Հայաստանը եւ Նահանգները: Ասաց, որ ռազմավարական նշանակության հարցերի վերաբերյալ Հայաստանը կունենա վճռական ձայնի իրավունք: Ասաց նաեւ, որ փորձագիտական շրջանակում քննարկվում է հետեւյալ հարցը՝ արդյոք ՀՀ որեւէ ինստիտուտ որեւէ սահմանափակում ունենալու է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այդ տարածքների վերաբերյալ, որով անցնելու է TRIPP-ը, եւ ինքն էլ պատասխանեց այդ հարցին՝ ոչ: Կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտից հետո հողի վրա գտնվող գույքը, նրա խոսքով, դառնալու է ՀՀ սեփականություն, իսկ հողը միշտ է եղել ՀՀ սեփականությունը: Այժմ, նրա ասելով, քննարկվում է կառուցապատման իրավունքի 2 սցենար՝ 99 եւ 49 տարվա սցենարը: Եվ ժամկետը պայմանավորեց ներդրումներով: «Եթե մենք ասենք, որ 5 տարով ենք տալիս այդ հողը, ոչ մեկը ներդրում չի անի, որովհետեւ անիրատեսական է 5 տարում այդ ներդրումը հետ ստանալ»,- ասաց նա: Փաշինյանը տեղեկացրեց, որ Ադրբեջանի նախագահի հետ Կոպենհագենում քննարկել են, թե որտեղից է պետք սկսել նախագծի իրականացումը, ու նախնական քննարկմամբ եկել են ըմբռնման, որ ամենաարագ իրականացվողը էլեկտրահաղորդման գծերի եւ գազամուղի կառուցումն է: Սակայն դա նախնական ըմբռնում է:

ԼՀԿ նախագահ **Էդմոն Մարուքյանն** ասում է, որ Փաշինյանը նաեւ ասում է, որ Տավուշի սահմանամերձ տարածքները հանձնելուց հետո սահմանազատման՝ շուրջ տարիուկես առկախված գործընթացում կրկին աշխուժություն է նկատվում:

Տավուշի սահմանամերձ տարածքները հանձնելուց հետո սահմանազատման՝ շուրջ տարիուկես առկախված գործընթացում կրկին աշխուժություն է նկատվում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ �չԵՆ ԵԿԵԼ

Հանգուցյալ գեներալ Մանվել Գրիգորյանի ընտանիքն ու դատախազությունը հաշտության չեն եկել եւ մերժել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջարկությունը. այս մասին «Հրապարակ»-ին ասաց Գրիգորյանի պաշտպան, փաստաբան **Լեւոն Բաղդասարյանը**: Նշենք, որ Գրիգորյանի ընտանիքը չի համաձայնել մահվան հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ՝ պահանջել են արդարացման դատավճիռ դատարանից՝ գեներալ Մանվելի հետ կապված: «Մենք այսօր Հակակոռուպցիոն կոմիտեում ունենք գործ, որտեղ դատախազությունը հայցով մտել է դատարան, եւ այդ պրոցեսի ընթացքում առաջարկություն է եղել դատախազության կողմից՝ հաշտության գնալու հետ կապված, եւ այդ հաշտությունը պետք է լիներ բոլոր գործերով: Բայց, ցավոք սրտի, այդ հաշտությունը տեղի չունեցավ, եւ Հակակոռուպցիոն դատարանը վճիռ կայացրեց՝ բավարարելով մասնակի դատախազության հայցը, եւ դատախազությունը բողոքարկեց: Մենք եւս պատրաստվում ենք բողոքարկել, քանի որ հաշտությունը տեղի չունեցավ: Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործին, իր վարույթում գործը գնում է, քանի որ հաշտության չգնացին: Հաշտության տարբերակներ էին քննարկվում, առաջարկությունն արվեց դատախազության կողմից, մենք ընդառաջ գնացինք, եւ այդ ժամանակ հաշտության բանակցություններ էին տեղի ունենում, բայց երկուստեք այդ հաշտությանը չեկանք: Դատարանը վերջնական ակտ կայացրեց եւ մասնակի բավարարեց, եւ երկու կողմն էլ բողոքարկեցին, դեռ բողոքը մենք չենք ներկայացրել, դեռ ժամկետներ կան: Ենթադրում եմ՝ կես տարվա ընթացքում կքննի եւ որոշում կկայացնի»,- ասաց պաշտպանը:

Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 28-ին Գլխավոր դատախազությունը դատարան էր ներկայացրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում՝ ընդդեմ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի ժառանգների եւ նրան փոխկապակցված անձանց: Հակակոռուպցիոն դատարանը մեկ ամիս առաջ վճռով մասնակի բավարարել էր Գլխավոր դատախազության հայցը: Մասնավորապես, վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Մանվել Գրիգորյանի ժառանգներից եւ նրան փոխկապակցված անձանցից, հօգուտ Հայաստանի Հանրապետության, կբռնագանձվեն ավելի քան 15 անշարժ գույք, 14 միլիոն 654 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ:

Հիշեցնենք նաեւ, որ Մանվել Գրիգորյանը ձերբակալվել էր 2018 թվականի հունիսի 16-ին, հունիսի 19-ին նրան մեղադրանք էր առաջադրվել: ԵԿՄ նախկին ղեկավարը մեղադրվում էր ապօրինի զենք-զինամթերք պահելու, ավելի քան 101 միլիոն դրամի գույք յուրացնելու, ավելի քան 1 միլիարդ դրամի հարկերի վճարումից խուսափելու, պետական միջոցներից ավելի քան 1 միլիարդ դրամ վատնելու եւ շորթմամբ 37 միլիոն դրամ արժողությամբ գույքի հափշտակություն կազմակերպելու մեջ: 2020 թ. հունվարի 15-ին առողջական վիճակի վատթարացման պատճառով Գրիգորյանը կալանքից ազատ էր արձակվել: Նա մահացավ 2020 թվականի նոյեմբերի 19-ին: Մանվել Գրիգորյանի նկատմամբ պատիժ չի նշանակվել՝ մահվան պատճառաբանությամբ, իսկ նրա կինը՝ Նազիկ Ամիրյանը, դատապարտվել է 6 տարվա ազատազրկման, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա արցախյան պատերազմի մասնակից է, ազատվել է ազատազրկման ձեւով պատիժը կրելուց: Դատավարությունը շարունակվում է: Ըստ պաշտպանական կողմի՝ դատարանը չունի բավարար ապացույցներ, որոնք կհաստատեին առաջադրված մեղադրանքները:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԿԱԼԱՆՔ

ԵԹԵ ՉԵՍ ՈՒԶՈՒՄ՝ ՀԱՄԱՅԱՆՑԻՑ ՉԵՍ ՕԳՏՎՈՒՄ, ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԽՈՍՔ ԼԻՆԵԼ

Ավելի քան մեկ ժամ տեւած քննչական գործողությունից հետո, առավոտյան ԱԱԾ աշխատակիցները ձերբակալեցին ու Քննչական կոմիտե տեղափոխեցին «Իմնեմնիմի» փոդքաստի հաղորդավարներ Նարեկ Սամսոնյանին եւ Վազգեն Սաղաթելյանին: Քննիչը հայտնեց, որ նրանք մեղադրվում են խուլիգանության համար: Պատճառը փոդքաստի նոյեմբերի 10-ի թողարկումն է, որտեղ Նարեկ Սամսոնյանը եւ Վազգեն Սաղաթելյանն անդրադարձել են Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին: Վերջինիս խոսնակն ավելի վաղ հայտարարել էր, որ Սիմոնյանն իրավապահներին հաղորդում է ներկայացրել վիրավորական արտահայտությունների, սպառնալիքների մասով, որպեսզի տրվի իրավական գնահատական: Ապա Ալեն Սիմոնյանն ինքն էր այս մասին խոսել եւ պնդել. «Դիմել եմ իրավապահներին եւ լավ եմ արել»: Ձերբակալության ժամանակ փաստաբան Ռուբեն Մելիքյանը փորձում էր մտնել Սամսոնյանի բնակարան եւ մասնակցել քննչական գործողություններին, սակայն դուռը նրա առջեւ այդպես էլ չբացվեց: Փոդքաստի մյուս հաղորդավարը՝ Վազգեն Սաղաթելյանը եւս Ֆեյսբուքում գրել էր, որ ԱԱԾ դիմակավորված աշխատակիցներն իր տուն են մտել: Փաստաբան Արսեն Բաբայանը լուսանկար է հրապարակել Վազգեն Սաղաթելյանի տան բակից եւ գրել, որ իրեն թույլ չեն տալիս ներս մտնել: Ավելի ուշ տեսանյութ է հրապարակել, որում երեւում է, որ Սաղաթելյանին եւս ձերբակալում են: Քննչական կոմիտեից հայտնել են միայն, որ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարվում են անհետաձգելի քննչական գործողություններ:

Ստացվում է՝ անպաշտպան քաղաքացու երեսին թքելը խուլիգանություն չէ, բայց, այ, հեղինակային հաղորդաշարի ընթացքում հայհոյելը խուլիգանություն է: Իրավապահ համակարգ չէ սա, զավեշտ է: Այս աստիճան սուբյեկտիվ, այս աստիճան գործադիր իշխանությունից կախյալ դատահիրավական համակարգ Հայաստանն իր նորանկախ պատմության ընթացքում երբեք չէր տեսել: Բայց ամեն անգամ, երբ խոսքի համար մարդ են ձերբակալում, դատում, կալանավորում, հանրությունը թերեւս ամենից շատ տարակուսում է այն փաստից, որ բազմաթիվ փորձությունների, իբրեւ ազատ խոսքի համար հալածված Փաշինյանն է այլախոհների դեմ այսպես պայքարում: Եթե, օրինակ, այսպես վարվեին նախկին նախագահները, կարելի էր դեռ ինչ-որ կերպ հասկանալ, բայց անգամ բռնապետի համբավ ձեռք բերած Ռ. Քոչարյանն այսպիսի հալածանքների չի ենթարկել քաղաքական այլախոհներին, ինչպես վարվում է ժողովրդավարության շղարշի տակ թաքնված Փաշինյանը:

Փաստաբան **Տիգրան Աթանեսյանին**, որը Նիկոլ Փաշինյանի փաստաբանն է եղել, «Հրապարակը» հարցրեց՝ ինչ նախադեպ է, երբ հայհոյանքը համարում են խուլիգանություն եւ մարդկանց կալանավորում: Երբ Փաշինյանին տարիներ առաջ դատում էին, նա հայտարարում էր, որ ճնշում են գործադրում իր նկատմամբ, փորձում են իր խոսքը լռեցնել: Այդ դեպքում ինչ է անում նա այսօր քաղաքական այլախոհների հետ: Աթանեսյանը, մեզ հետ զրույցում անդրադառնալով հարցին, նկատեց. «Դժվար հարց է, որովհետեւ զուտ խոսքի համար, եթե չի եղել զրպարտություն, վիրավորանք, այսպես ասած՝ եթե արարքը խուլիգանական էլեմենտներ չէր ունենում, չեմ հիշում, որ առաջներում նման դեպքերում մարդկանց լուրջ հետապնդեին: Ասել, թե լրագրողներին երբեւէ չեն հետապնդել, չեմ կարող, ոչ՝ եղել են դեպքեր, բայց շատ կարեւոր է ֆիքսել. երկրում ընդհանուր մթնոլորտն այսօր ուրիշ է: Մինչեւ 2018 թվականը՝ Նիկոլի իշխանության գալը, ընդունված չէր հայհոյելը, գուցե ինչ-որ քննադատություններ հնչեին, սուր խոսքեր եւ այլն, սակայն ուղիղ հայհոյանքն ընդունված չէր: Նրանք, ովքեր անցնում էին որոշակի սահմաններ, պատժվում էին, սակայն այսօրվա Հայաստանում, երբ իշխանությունների ձեռամբ հայհոյանքն ու վարկաբեկումը դարձել են սովորական երեւույթներ, դժվար է համեմատություններ անելը»:

Ինչո՞ւ է վարչապետը ԱԱԾ-ն դարձրել իր քաղաքական հակառակորդներին պատժելու, բերման ենթարկելու գործիք, ի վերջո՝ այդ կառույցի գործառույթը շատ ավելի լուրջ է: «Ես չգիտեմ, հիմա կարելի՞ է ասել՝ լուրջ է, թե ոչ, ինչու, որովհետեւ, դատելով նրանից, թե թուրքական հետախուզությունն ինչպես է աշխատում Հայաստանում, կարող ենք արձանագրել, որ այն այնքան էլ լուրջ կառույց չէ: Սեփական քաղաքացիներին վախեցնելն այդ կառույցին չի դարձնում լուրջ: Ինչ վերաբերում է խուլիգանությանը, ապա ո՞վ է առաջինը վիրավորել. Ալեն Սիմոնյանը, իսկ նրանք հակադարձել են Սիմոնյանին: Ստացվում է, որ Հայաստանում ձեւավորվել են բռնապետական կարգեր, ով ում ուզում, ինչքան ուզում, ձերբակալում է, կալանավորում է, բայց վարչապետը, ԱԺ նախագահն իրավունք չունեն ինչ-որ մեկին բերման ենթարկելու հրաման տալու: Նրանք թագավոր չեն, ի վերջո: Այս ամբողջ պրոցեսն ինքնին ապօրինի է»:

Ի՞նչ ասել է խուլիգանություն, ի՞նչ հանցակազմ է պարունակում Քրեական օրենսգրքի այս հոդվածը: «Խուլիգանությունը հասարակական կարգի տապալում է: Օրինակ՝ երբ գիշերային ժամերին ինչ-որ մեկը բարձր հայհոյում է՝ խանգարելով տարբեր անձանց, երեխաների, տարեցների եւ, առհասարակ, ցանկացած տարիքի եւ սեռի անձանց հանգիստը: Ֆեյսբուքում, Յութուբում խուլիգանությամբ զբաղվելը ես լավ չեմ պատկերացնում, թե ինչ է: Ո՞ւմ երեխան չի կարողացել քնել այդ հաղորդման պատճառով, կամ ո՞վ է արթնացել քնից դրա պատճառով: Համացանցն այնպիսի երեւույթ է, որ եթե չես ուզում, չես օգտվում դրանից, այստեղ խուլիգանության մասին չի կարող խոսք լինել: 15 տարի է՝ վիրավորանքն ապաքրեականացվել է, օրինակ՝ չի կարելի վիրավորել դատավորին: Այսպիսի առանձին դեպքեր կան, սակայն, ընդհանուր առմամբ, հայհոյանքում չկա հանցակազմ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԵՂՁԱՎԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 50 ՀԵԿՏԱՐԸ ՄՆԱՑԵԼ Է ՓՇԱԼԱՐԻ ԱՅՆ ԿՈՂՄՈՒՄ՝ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՄՇԱԿԵԼ

Փոքր է Հայաստանի տարածքը, սակայն տարիների ընթացքում այն շագրենի կաշվի նման ավելի է փոքրացել: Պարզվում է՝ սահմանազատման, սահմանագծման հետ կապված խնդիրներ կան ոչ միայն Ադրբեջանի, այլեւ բարեկամ երկիր Վրաստանի հետ: 2006 թվականին հայ-վրացական սահմանները նշելիս Նոյեմբերյանի տարածաշրջանի, այժմ՝ Նոյեմբերյան խոշորացված համայնքի Դեղձավան գյուղի վարչական հողերից 50 հեկտար հողատարածք մնացել է սահմանագոտում փռված փշալարից անդին: Այդ 50 հեկտարից 5,2-ը Դեղձավան գյուղի 19 բնակիչների սեփականությունն է, 4,4 հեկտարը համայնքային սեփականություն հանդիսացող վարելահող է, մոտ 40,4 հեկտարը համայնքային սեփականության արոտավայրեր են: Ցանկապատված հատվածի աջ եւ ձախ կողմերում առաջացել է 15 մետր լայնությամբ սահմանային շերտ, որը որոշ հատվածներում կիսել է դեղձավանցի հողի սեփականատերերի հողատարածքները եւ գործնականում անհնար դարձրել հողերի մշակման աշխատանքները: Այդ չմշակվող հողերի համար ո՛չ հողի սեփականատերերը, ո՛չ էլ համայնքը դրամական փոխհատուցում չեն ստացել, այդ հողերը համայնքի հաշվեկշռից դուրս չեն գրվել:

Դեղձավան համայնքը 2021 թվականից ղեկավարող, ներկայում այդ բնակավայրի վարչական ղեկավար **Յուրի Հովհաննիսյանը** հայտնեց, որ 2006-2008 թթ. նշված հողատարածքների եւ այլ հողերի հարկերի պարտքերը 2012 թվականին ընդունված «Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» օրենքով ներվեցին: Դեղձավանի վարչական ղեկավար Յուրի Հովհաննիսյանի բացատրագրի հիման վրա Նոյեմբերյան խոշոր համայնքի ավագանին Դեղձավանի վերոհիշյալ հողերի սեփականատեր, հարկային արտոնություն ստացած 19 բնակիչների փոխարեն 2022 եւ 2023 թվականների համար հաշվարկված հողի հարկը՝ յուրաքանչյուր տարի 33 հազար 557 դրամ, վճարել է Նոյեմբերյան խոշորացված համայնքի բյուջեից: Դեղձավանի համայնքապետարանը 2006-2012 թվականներին դիմել է Տավուշի մարզպետարան, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, ԱԱԾ, որպեսզի այդ հողերի հարցին լուծում տրվի: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը Դեղձավանի համայնքապետարանին առաջարկել է գյուղից համարժեք հողերով փոխհատուցել այդ հողերի սեփականատերերին: Յուրի Հովհաննիսյանը նույնպես սեփական հողամաս ունի նշված սահմանային հատվածում: Նրա վկայությամբ՝ Դեղձավանը համարժեք հողամասեր չունի, համայնքի պահուստային հողատարածքները կամ ավելի ցածրարժեք են՝ ոռոգելի չեն, կամ էլ 25 տարի ժամկետով վարձակալությամբ են տրված: Դեղձավանի համայնքապետարանը նախկինում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանն առաջարկել է այդ 50 հեկտար տարածքը հանրային գերակա շահ ճանաչել եւ դրա դիմաց փոխհատուցել Դեղձավանի բնակիչներին: Նախարարությունից պատասխանել են, որ այդ հողատարածքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, գյուղացիները կարող են անցագրով անցնել փաստացի սահմանը եւ մշակել իրենց հողերը: Սակայն Դեղձավանի բնակիչներն ասում են, որ չեն կարող անցնել իրենց հողով ձգվող փշալարի միջով: Վերոհիշյալ 50 հեկտարից ավելի քան 40 հեկտարն արոտավայր է, որից զրկվել է սակավահող Դեղձավան գյուղը: Այդ պատճառով նվազել է Դեղձավանում պահվող խոշոր եղջերավոր անասունների քանակը: Յուրի Հովհաննիսյանը հայտնեց, որ ներկայում Նոյեմբերյանի համայնքապետարանն այդ հողերի սեփականատերերին արտոնություն է տվել, զիջել է փշալարից անդին գտնվող, չմշակվող հողերի հարկը, թեեւ այդ հողերի հարկը շարունակում է մնալ Նոյեմբերյան համայնքի սեփական եկամուտների հավաքագրման ցանկում:

Յու. Հովհաննիսյանին հարցրի՝ վերջին շրջանում իրավիճակը փոխվե՞լ է, հողերի սեփականատերերը կարողանո՞ւմ են անցնել փշալարից այն կողմ, մտնել իրենց հողերը: Վարչական ղեկավարն ասաց, որ Հայաստանի սահմանապահները գյուղացիներին արգելել են, չեն թույլատրում 300 մետրից պակաս հեռավորությամբ մոտենալ փշալարին: Նրա խոսքով՝ այդ հատվածում հայ-վրացական սահմանի սահմանագծում եւ սահմանազատում դեռեւս տեղի չի ունեցել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՏՔԻՆ

ԻՆՉՈՒ ՀԱՆՑԱԳՈՐԾԻՆ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

Հշխանություն տվեք որեւէ հանցագործի, մոլագարի, կրկնահանցագործի՝ սերիական մարդասպանի, որը տասնյակ կամ հարյուրավոր մարդկանց կյանք է խլել, նա անմիջապես այդ իշխանությունը կօգտագործի իրեն արդարացնելու եւ իրեն մեղադրողներին ոչնչացնելու համար: Նաիրի Հունանյանն իր կազմակերպած ահաբեկչությունից անմիջապես հետո, իր զոհերի մարմինների ներկայությամբ, խորհրդարանի ամբիոնից խոսում էր այն մասին, որ ինքն ազատագրել է Հայաստանը եւ հայ ժողովրդի համար մեծ բարիք է գործել: Այնպես որ, նախորդ օրը խորհրդարանում տեղի ունեցածի մեջ որեւէ արտառոց բան պետք չէ փնտրել՝ յուրաքանչյուր հանցագործ իրեն համարում է բարերար, որքան մեծ է նրա կատարած հանցագործության չափը, որքան ծանր են հետեւանքները, այնքան մեծ է արդարանալու, արդարացվելու ցանկությունը, որը վերածվում է մոլուցքի:

Վերցրեք հանցագործություն կատարած մարդուց իր պաշտոնը, զրկեք նրան պաշտոնի ուժով տրված պաշտպանությունից, եւ նա կվերածվի սովորական խղճուկ հանցագործի, որը, կորցնելով այլոց մեղադրելու կամ իրեն արդարացնելու հնարավորությունը, կսկսի տեղ փնտրել՝ վերահաս արդարադատությունից թաքնվելու համար: Ամենաթարմ օրինակն Ուկրաինայի անվտանգության խորհրդի քարտուղար Ռուստեմ Ումերովն է, որը մինչեւ այս տարվա հուլիսը զբաղեցնում էր երկրի պաշտպանության նախարարի պաշտոնը՝ գրեթե երկու տարի:

Ուկրաինայում կոռուպցիոն մեծ ցանց բացահայտվեց, որի մեջ ներգրավված էին տարբեր պաշտոնյաներ, այդ թվում՝ հիշյալ Ռուստեմ Ումերովը, նաեւ՝ երկրի նախագահ Զելենսկու մերձավոր օլիգարխ Թիմուր Մինդիչը: Նրանք հարյուր միլիոնավոր դոլարներ են գողացել երկրի բյուջեից՝ իբրեւ թե երկրին անօդաչուներ, զրահաբաճկոններ եւ այլ ռազմական տեխնիկա ու հանդերձանք մատակարարելու համար: Մատակարարումները եղել են, բայց անորակ, չափազանց թանկ գներով, իսկ տարբերությունը յուրացվել է: Այդ միլիոններն ու միլիարդները յուրացվել են երկրին Եվրոպայի եւ ԱՄՆ-ի կողմից տրամադրված վարկերից եւ ֆինանսական օգնությունից: Նման է, չէ՞, Փաշինյանի արդարացմանը, թե արտաքին պարտքն օգտագործվել է պաշտպանության կարողությունների բարձրացման կամ քովիդի դեմ պայքարի համար:

Մինչեւ երեկ չէ, առաջին օրը Ումերովը հզոր պաշտոնյա էր, զբաղեցնում էր երկրի անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը, որը դեռ չի լքել, շատ լուրջ դեմքով եւ տեսքով հայտարարում էր, թե օր ու գիշեր զբաղված է պատերազմող Ուկրաինային ծառայելով, անում է ամեն ինչ, որ երկիրը հաղթի պատերազմում: Հիմա նա թաքնվում է Թուրքիայում. սա էլ , չէ՞, խորհրդանշական: Կոռուպցիոն մեխանիզմների բացահայտումից անմիջապես հետո նա թռավ Թուրքիա՝ հայտարարելով, որ այդ երկիր է գնացել գերիների փոխանակման հարցով բանակցություններ վարելու համար, թե ում հետ է բանակցություն վարում, որեւէ մեկին հայտնի չէ, քանի որ ռուսական կողմն այդպես էլ չհաստատեց, որ նրա հետ ինչ-որ բանակցություններ են վարվում: Պարզ է, որ նա փախել է երկրից՝ արդարադատությունից խուսափելու համար: Ընդամենը երեկ չէ, առաջին օրը նա ազնիվ, իր երկրին ծառայող պաշտոնյա էր, հիմա փախուստի մեջ գտնվող, երկիրը թալանելու, բանակի փողերը մսխելու մեջ կասկածվող հանցագործ է: Նույնը՝ Զելենսկու ընկեր եւ երկրի ամենաազդեցիկ օլիգարխ Մինդիչը. նա Լեհաստանով փախուստի դիմեց, երբ իմացավ, որ հակակոռուպցիոն բյուրոյի քննիչները գալու են իր հետեւից:

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին չկարողացավ պաշտպանել ո՛չ իր ընկեր եւ միլիարդատեր Թիմուր Մինդիչին, ո՛չ էլ երկրի անվտանգության խորհրդի քարտուղար Ռուստեմ Ումերովին: Եվ գիտե՞ք, թե ինչու. ըստ տեղեկությունների, այս կոռուպցիոն սկանդալի հետեւում կանգնած է ԱՄՆ-ն, որն այդկերպ փորձում է ճնշում գործադրել Ուկրաինայի իշխանությունների վրա՝ ստիպելով գնալ խաղաղության: Ուկրաինայի հակակոռուպցիոն բյուրոն չի ենթարկվում երկրի նախագահին, այն ստեղծվել է ամերիկացիների հրահանգով եւ ենթարկվում է նրանց, եւ երբ մի քանի ամիս առաջ Զելենսկին ուզում էր լուծարել այդ կառույցը, ամերիկացիները ստիպեցին, որ նա հրաժարվի այդ մտքից, եւ Զելենսկին խելոք ենթարկվեց: Ուկրաինայի իշխանությունների եւ ԱՄՆ-ի հակասությունը պատերազմի դադարեցման հարցում է. ամերիկացիներն ուզում են կանգնեցնել պատերազմը, Զելենսկին ու իր թիմը դեմ են, քանի որ պատերազմի վրա միլիոնավոր եւ միլիարդավոր դոլարներ են աշխատում, պատերազմը նրանց՝ իշխանության մնալու միակ երաշխավորն է:

Փաշինյանը եւ իր թիմակիցները կարող են իրենց թույլ տալ խոսել ազնվությունից, ձեւացնել, թե իրենք 24 ժամ անքուն ու անհանգիստ աշխատում, ծառայում են Հայաստանին, որ դղյակ կառուցելու փոխարեն դպրոց ու մանկապարտեզ են կառուցում, որ ոսկի եւ դոլար կուտակելու փոխարեն հարգանք ու վստահություն են հետ գցում, որ արտաքին պարտքը ոչ թե իրենց արտասահմանյան հաշիվների վրա է, այլ ծախսվել է երկրի պաշտպանական կարիքների, քովիդի դեմ պայքարի վրա՝ մարդկանց կյանքերն են փրկել: Նրանք իրենց այդպես են պահում՝ մտածելով, որ բացահայտվելու վախ չկա, իրենք հնազանդորեն ծառայում են ամերիկյան տիրոջը, եւ նա երբեք իրենց չի հանձնի արդարադատությանը: Բոլոր ամերիկյան ծառա-կառավարիչներն էլ այդպես են մտածել, բայց բոլորն էլ ինչ-որ ժամանակ հետո դարձել են անպետք՝ իրենց տերերի համար, եւ նրանց դուրս են գրել, ինչպես հիմա դուրս են գրում Զելենսկուն եւ թիմակիցներին: Հայաստանում էլ իշխանությունը կփլվի, երբ մի օր ԱՄՆ իշխանությունները որոշեն հրապարակել իրենց ձեռքի տակ ունեցած տեղեկությունները, բացահայտեն, թե ով է երկնային հարստության փոխարեն միլիոնավոր եւ միլիարդավոր դոլարներ կուտակել, պահ տվել աշխարհի տարբեր բանկերում կամ ձեռք բերել դղյակներ ծովափնյա հանգստավայրերում, որպես մանկապարտեզ՝ իրենց չափահասության տարիքը վաղուց անցած երեխաների համար:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՆԻԿՈԼԸ ՃԻՇՏ Է՝ ԻՐ ՉԱՓ ՈՉ ՄԵԿԸ ՀԱՅԻՆ ՏՆԱՎԵՐ ՈՒ ԲՆԱՎԵՐ ՉԻ ԹՈՂԵԼ

«Հայաստանը կոնկրետ մի երկրի գրպանում է հայտնվել մի գործիքով՝ Ղարաբաղի հարցով»,- նոյեմբերի 13-ին ԱԺ-ում 2026 թվականի բյուջեի նախագծի քննարկման ժամանակ իր ելույթում նշել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: «Ուրիշ որեւէ պատճառ եւ բացատրություն չկա: Ընդդիմության պատգամավորը բանակում ուրիշ երկրի ազդեցության գործակալների մասին է խոսում, բայց եթե բանը հասել է այդտեղ, եկեք մի հատ փորձենք ցուցակ կազմել 2018 թվականի դրությամբ այդ երկրի ազդեցության գործակալ հանդիսացող եւ չհանդիսացողների միջեւ: Ընդ որում, սա անձնավորված չի, ամենայն հարգանքով բոլորին, բայց 2018-ին էլ, 19-ին էլ, 20-ին էլ, տո 21-ին էլ, մինչեւ 22, 22-ը ներառյալ, մեր բանակի սոցիալ հոգեբանությունը, մտածողությունը եղել է ազդեցության գործակալի: Մեր բանակում չի եղել ինքնիշխան կամքի կենտրոն: Ընդ որում, սա չի նշանակում, որ բոլորը եղել են այդպիսին, ոչ՝ ես մթնոլորտի մասին եմ խոսում, ես տրամադրության մասին եմ խոսում, ես ընկալման մասին եմ խոսում: Մենք պետք է այս ճշմարտության հետ առերեսվենք»,- ասաց նա: «Մարդիկ եկել՝ Ղարաբաղ են լացում: Ոչ մեկ մեր չափ ոչինչ չի արել Ղարաբաղի համար»,- ասաց Փաշինյանը:

Արցախի «Արդարություն» խմբակցության պատգամավոր **Մետաքսե Հակոբյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Փաշինյանի այս պնդումներին, ասաց. «Նիկոլ Փաշինյանն ամեն բան ասում է ճիշտ, հարցն այն է, թե մենք նրա ասածներին որ տեսանկյունից ենք նայում: Իհարկե, Արցախի համար ամենաշատը Նիկոլն է արել: Օրինակ՝ Արցախի համար հազարավոր զոհեր է տվել, մեծացրել ու շքեղացրել է Եռաբլուրը, Արցախի՝ Ստեփանակերտի եղբայրական պանթեոնը: Նա մեր հայրենակիցներին մոլորեցնելով, մոռացել է նշել, որ հանձնել է Արցախի Հանրապետությունը: Սկզբում մի մասը հանձնեց՝ պատճառաբանելով, որ պատերազմի հետեւանքով տուժած արցախցիների համար տներ պետք է կառուցեն, սակայն հետո եղավ այն, ինչ եղավ: Ոչ մի արցախցի այդպես էլ ականատես չեղավ նոր բնակարանի: Ի վերջո՝ նոր տուն կառուցվե՞ց, թե՞ ոչ, կա՞մ մի շենք, որ հանձնվել է արցախցիներին, իհարկե՝ ոչ: Այսօր կա՞մ մեկը, որ փորձում է ճշտել, թե այդ միլիարդավոր դոլարների հետ ինչ եղավ, որ նպատակի համար ծառայեցին: Այո, Նիկոլը ճիշտ է, իր չափ ոչ մեկը հային տնավեր ու բնավեր չի թողել: Արցախցիների մի մասը հեռացել է Հայաստանից, իսկ մյուս մասը բռնաճնշումների է ենթարկվում միայն այն բանի համար, որ արցախցի է եւ համաձայն չէ այս իշխանության վարած քաղաքականության հետ»:

Հայ ռազմագերիների մասով ինչո՞ւ քայլեր չեն ձեռնարկվում՝ նկատեցինք մենք: «Վերոնշյալ ցանկին կարող ենք ավելացնել: Հայ գերիները շարունակում են պատանդառության տակ մնալ, այստեղ նույնպես Նիկոլի «շնորհքն» է: Նրա ուրույն ձեռագրի արդյունքում է, որ մենք մինչ օրս ունենք պատանդառված հայրենակիցներ՝ Բաքվի բանտերում: Կարծում եմ՝ բոլորն էին սպասում, որ այդ «դատական պրոցեսներն» ունենալու էին հենց այսպիսի ավարտ, քանի դեռ իշխանության են այս հակահայ անձինք: Ըստ ամենապարզ տրամաբանության՝ ցանկացածին հասկանալի է, որ այս բոլոր ամպագոռգոռ հայտարարությունները՝ կեղծ խաղաղության հետ կապված, քավ լիցի՝ մենք խաղաղությանը դեմ չենք, սակայն հասկանում ես, որ եթե իրականում խոսքը խաղաղության մասին է, այլ ոչ թե նվաստացման եւ պատերազմի, ապա խաղաղության պայմանագրի քննարկման ժամանակ, առանց որեւէ խոչընդոտի, գերիները պետք է լինեին իրենց տներում: Քանի որ այդ ամենը տեղի չունեցավ, թող մեզ չփորձեն համոզել ու հոխորտալ, թե մենք պետք է լռենք ու գերիների մասին չխոսենք, քանի որ իշխանությունները լուրջ քայլեր են անում: Ոչ, գերիների հարց չկա նրանց օրակարգում: Բաքվի դատարանում առաջարկվող այդ խայտառակ պատժամիջոցները դրա վառ ապացույցն են: Ամբողջ աշխարհի աչքի առաջ կեղծ դատավարություն է տեղի ունենում, մարդու իրավունքները խախտվում են ամենակոպտագույն ձեւով, սակայն ադրբեջանական քարոզչամեքենան հաջողում է, որովհետեւ լուռ են Հայաստանի իշխանությունները»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԵՐԲ ԳԱԼԻՍ Է ԴԱՏԱՍՏԱՆԻ ԺԱՄԸ, ԱՅՆ ՉԻ ԽՆԱՅՈՒՄ Ո՛Չ ԲՌՆԱՊԵՏՆԵՐԻՆ, Ո՛Չ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻՆ

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՒԴԱՆ

1989 թվականին գեներալ Օմար ալ-Բաշիրի բռնապետական ռեժիմի հենարանը ուժային, կուսակցական եւ կլանային կառույցներն էին, հատկապես՝ արագ արձագանքման ուժերը (Ջանջավիդ), ազգային անվտանգության եւ հետախուզության ծառայությունը: Նրանց խղճին են ընդդիմության, ազգային փոքրամասնությունների եւ քրիստոնյա համայնքների առաջնորդների դաժան հետապնդումներն ու սպանությունները: Ալ-Բաշիրի դեմ 3 տարի ընթացող շարժումը 2019-ին գլխավորեցին ժողովրդին միացած զինվորականները, եւ արնախում բռնապետը հայտնվեց նույն բանտում, որտեղ տարիներ շարունակ խոշտանգում էր իր հակառակորդներին: Նա Սուդանում արդեն դատապարտվել է կոռուպցիայի, արտասահմանում դրամական միջոցներ պահելու, անօրինական եկամուտների լվացման մեջ: Սակայն նրա արտահանձնումն է պահանջում Միջազգային քրեական դատարանը՝ պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մեղադրանքներով:

Ուշագրավ երեք մանրամասն: Որպես նրա գործած առաջին հանցագործություն է ճանաչվել 1989թ. պետական հեղաշրջմամբ կատարած իշխանազավթումը: Ալ-Բաշիրն առաջին նախագահն է, որին ձերբակալելու որոշումն ընդունվել է նրա պաշտոնավարման ընթացքում՝ 2008 թվականին: Եվ երրորդ կարեւոր փաստը. ձերբակալելու փաստաթուղթը ստորագրել է ՄՔԴ-ի դատախազ, արցախանպաստ իր գործունեությամբ հայտնի Լուիս Մորենո Օկամպոն (Արգենտինա):

Բայց արդյո՞ք միշտ է ալ-Բաշիրը եղել Արեւմուտքի կողմից մերժված: Ամենեւին՝ ո՛չ: Մինչեւ 2000-ականների կեսը Արեւմուտքն աչք էր փակում նրա վարչախմբի բռնությունների վրա, նախ, քանի որ սառը պատերազմի ավարտին հաջորդած առաջին 10-ամյակում (1990-99թթ.) նրան դիտում էր որպես գործընկեր իսլամական Աֆրիկայում, քանի որ Սուդանը վերահսկում էր Կարմիր ծովի մուտքը, ու ԱՄՆ-ն փորձում էր նրա միջոցով զսպել Իրանի եւ Լիբիայի ազդեցությունն այդ տարածաշրջանում: Սակայն, երբ պարզ դարձավ, որ ալ-Բաշիրը հովանավորում է իսլամիստներին (հայտնի է, որ Օսամա բեն Լադենը նույնիսկ որոշ ժամանակ ապրել է Խարթումում), Վաշինգտոնը կտրուկ փոխեց վերաբերմունքը եւ Սուդանը ճանաչեց որպես ահաբեկչությունը հովանավորող երկիր: Անգամ Դարֆուրի ճգնաժամի տարիներին (2003-2008թթ.), երբ ցեղասպանության զոհ դարձավ շուրջ 300 հազար խաղաղ բնակիչ, միջազգային հանրությունը ծուլորեն էր արձագանքում նրա ոճրագործություններին: Ինչո՞ւ: Հայերիս քաջ ծանոթ երկու պատճառով՝ տարածաշրջանում արեւմտյան ազդեցության պահպանում եւ նավթ: Պարզ է, որ Արեւմուտքի «զսպվածությունը» փաստացի երկարացրեց բռնապետի կյանքը, եւ այդ երկրում մարդու իրավունքների աղետալի խախտումները երկար ժամանակ մնացին միջազգային անտարբերության ստվերում: Ալ-Բաշիրի դեմ ավելի վաղ եւ վճռական գործողությունները կարող էին փրկել մի քանի հարյուր հազար անմեղ կյանքեր:

ԿԱՄԲՈՋԱ

Բռնակալներին հանդուրժելու քաղաքականությունն Արեւմուտքը գործադրեց նաեւ Կամբոջայում: Երբ երկարատեւ քաղաքացիական պատերազմից հետո՝ 1997-ին, Հուն Սենը ռազմական հեղաշրջմամբ տապալեց կոալիցիոն կառավարությունը, Արեւմուտքը խիստ ձեւական քննադատության ենթարկեց օրինական իշխանության բռնի տապալումը եւ արագ վերականգնեց խզված դիվանագիտական ու տնտեսական կապերը մեզ հայտնի նույն՝ «տարածաշրջանային կայունության ապահովման» հիմնավորմամբ: Կամբոջայի հիրավի բազմաչարչար ժողովուրդը շատ թանկ գին վճարեց նման կայունության համար՝ քառորդ դար տառապելով ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի դաշնակից Հուն Սենի ավտորիտար վարչակարգի աքցաններում: Արեւմուտքն այդ տարիներին առատորեն ֆինանսավորում էր ժողովրդավարության զարգացման ծրագրեր մի երկրում, որտեղ վերացվել էին անկախ մամուլը, ընդդիմադիր կուսակցությունները, տեղի էին ունենում մարդու իրավունքների զանգվածային խախտումներ եւ բռնաճնշումներ: «Ռեալպոլիտիկի» թեւի տակ Հուն Սենն իշխեց մինչեւ 2023 թվականը, եւ միայն այն բանից հետո, երբ իշխանությունը փոխանցեց որդուն, Արեւմուտքն արձակեց խուլ տրտունջներ՝ թե ժառանգական բռնապետություն է հաստատվել: Բայց արդեն ուշ է. Կամբոջայում ժողովրդավարության ինստիտուտները վաղուց են ոչնչացվել (հայկական իրականության հետ զուգահեռներն անխուսափելի են:)

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

Վենեսուելայի նախագահ Հյուգո Չավեսի կառավարման սկզբնական տարիներին՝ 2000-ականների սկզբին, Արեւմուտքը կրկին ընտրեց սխալ ճանապարհ, բայց ելնելով այլ տնտեսական հաշվարկներից: Վենեսուելան Արեւմուտքին նավթի մատակարարող հիմնական երկրներից է, եւ ավտորիտար առաջնորդ Չավեսի հակաամերիկյան հռետորաբանությունը երկար ժամանակ ընկալվում էր որպես պոպուլիստական «չարաճճիություն»: ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն արձագանքեցին միայն այն ժամանակ, երբ փակվեցին լրատվամիջոցներ, բանտ նետվեցին ընդդիմադիրները, վերացվեցին Սահմանադրական դատարանի վերահսկողական լիազորությունները: Չավեսի ավտորիտարիզմը շարունակեց նրան հաջորդած զինակիցը՝ Նիկոլաս Մադուրոն: Սա ավելի սաստկացրեց ժողովրդավարական ուժերի դեմ հալածանքները եւ շնորհիվ վենեսուելական նավթից արտաքին խաղացողների կախվածության ու Արեւմուտքի հակասական քաղաքականության, Մադուրոն դեռ պահպանում է իր անողոք վարչակարգը: Դեպքերը զարգանում են վատթարագույն սցենարով, ռազմական ներխուժումն անխուսափելի է. նախագահ Թրամփը նոր է միայն իմացել, որ Վենեսուելայից ԱՄՆ թմրանյութեր են արտահանվում:

ՉՍԵՐՏԱԾ ԴԱՍԵՐԻ ԹԱՆԿ ԳԻՆԸ

Ժողովրդավարության, մարդու իրավունքների մասին բարձրագոչ ճառասացները տասնամյակներ շարունակ աչք են փակել (ու փակում) բռնապետների հանցագործությունների վրա՝ հանուն նավթի, տարածաշրջանային կայունության կամ ազդեցության գոտին պահպանելու: Ի հակադրություն այս ցինիզմի՝ կա հավերժական ճշմարտություն. երբ լցվում է ժողովրդի համբերության բաժակը, նա քամուն է տալիս լռության վրա կառուցված ավազե ամրոցները, եւ գալիս է դատաստանի ժամը, որը չի խնայում ոչ բռնապետներին, ոչ նրանց հովանավորներին: Չսերտած դասերի համար թանկ գին են վճարում եւ զոհերը, եւ դահիճները: Շատ ժողովուրդներ են անցել (ու շարունակում են անցնել) բռնապետության քավարանը: Արեւմուտքը Հայաստանում էլ է նույն սխալը գործում՝ իրավունքի ու ազատության մնայուն արժեքները ստորադասելով վաղանցիկ կայունությանը: Այս կարգի realpolitic-ի շահառուներն են նաեւ բռնապետության ուղին բռնած ՔՊ-ականները:

Ժողովուրդ, չպետք է հուսալքվել: Պետք է պայքարել, եւ ազատ ու արժանապատիվ կյանքի դարպասները կբացվեն քո առջեւ:

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԵԿՏՈՐՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուկրաինայի հետ պատերազմի մեկնարկից հետո թվում էր, թե Ռուսաստանի ֆինանսական համակարգը հաշված օրերի ընթացքում կմատնվի կրախի, քանի որ Արեւմուտքը մի շարք խիստ սանկցիաներ սահմանեց Ռուսաստանի դեմ, ներառյալ նաեւ՝ այդ երկրի ունեցած արտարժութային պահուստների, որոնք հանգեցրել էին ռուբլու գնանկման: Սակայն կարճ ժամանակ անց Ռուսաստանի ԿԲ-ն վերահսկողություն սահմանեց կապիտալի շարժերի նկատմամբ, բարձրացրեց մեկնարկային տոկոսադրույքները եւ ձեռնարկեց մի քանի գործողություն եւս, որոնք փոքրիշատե կայունացրին իրավիճակը: Ու թեեւ Ռուսաստանի արտարժութային ռեզերվների մի մասը շարունակում է մնալ սառեցված, սակայն այդ երկիրն օրական մեկ միլիարդ դոլար է ստանում էներգակիրների արտահանումից: Այս ընթացքում, ինչպես գրում է The Economist հանդեսը, Ռուսաստանը դադարեցրել է առեւտրի վերաբերյալ ամենամյա վիճակագրություն հրապարակելը: Սակայն այն տվյալները, որոնք հնարավոր է վերցնել առեւտրային գործընկերներից, մոտավոր կերպով պատկերացում են տալիս, թե ինչ է կատարվում:

Ըստ այդմ, պարզ է դարձել, որ ներմուծման կրճատման եւ արտահանման ծավալների պահպանման պայմաններում Ռուսաստանում առեւտրային բալանսի ռեկորդային հավելուրդ կա: Այսպես. այս տարվա մայիսի սկզբի դրությամբ, Չինաստանը 25 տոկոսով նվազեցրել է իր ապրանքների արտահանումը ՌԴ, մինչդեռ Ռուսաստանից ապրանքների ներկրումն ավելացրել է 56 տոկոսով՝ անցյալ տարվա համեմատ: Ռուսաստանի մյուս առանցքային առեւտրային գործընկերների հրապարակած առեւտրային վիճակագրությունն էլ նկատի ունենալով, հոդվածագիրներն ամփոփել են, որ 22 թվականի փետրվարից ի վեր ռուսական ներմուծումը նվազել է 44 տոկոսով, արտահանումն ավելացել է 8 տոկոսով: Ներմուծումը նվազել է մասամբ նաեւ այն պատճառով, որ Արեւմուտքը սանկցիաներ է սահմանել ռուսական Կենտրոնական բանկի նկատմամբ եւ որոշ վարկատուների հեռացրել է միջբանկային swift համակարգից, ինչը դժվարացրել է սպառողների եւ ընկերությունների համար արեւմտյան ծագման ապրանքների գնումը: Սկզբնապես, առեւտրի ոլորտում կար անորոշություն, քանի որ արեւմտյան ընկերությունները վստահ չէին, թե որ ռուսական բանկերն են հայտնվելու սանկցիաների տակ: Ազդեցության իր բաժինն ունեցան նաեւ լոգիստիկ խնդիրները, որոնք առաջացան այն պատճառով, որ մի շարք արեւմտյան ընկերություններ դադարեցրին Ռուսաստանին ապրանքների մատակարարումը: Ռուբլու փոխարժեքային անկումն էլ նվազեցրեց ռուսական ներմուծման հանդեպ հետաքրքրությունը: Այս իրավիճակում, սակայն, ռուսական արտահանումը, այդ թվում՝ նաեւ Արեւմուտք կատարվող արտահանումը, բավականին լավ պահպանվեց: The Economist-ն արձանագրել է, որ, չնայած սանկցիաներին, ռուսական նավթն ու գազն անխափան վաճառվում են աշխարհի երկրներից մեծ մասին: Իսկ էներգակիրների կտրուկ գնաճն էլ ավելի է ավելացնում եկամուտները: Այս ամենի արդյունքում, առեւտրային բալանսի հավելուրդն ու որոշ ֆինանսական հոսքերը կարող են հանրագումարում կազմել 250 միլիարդ դոլար: Ու սա՝ այն դեպքում, երբ սանկցիաների արդյունավետությունը, ըստ մի շարք հեղինակավոր փորձագետների, հասել է իր սահմանագծին:

Հաջորդիվ պետք է խստացվեն առեւտրային սանկցիաները, սակայն դրանք միանգամից չեն կարող մտնել ուժի մեջ: Եթե նույնիսկ ԵՄ-ն ընդունի ռուսական նավթի ամբողջական արգելանքը, միեւնույն է, այն այնքան դանդաղորեն է սահմանվելու, որ տարեկան կտրվածքով Ռուսաստանից նավթի արտահանման վրա կազդի 19 տոկոսի չափով: Իսկ մինչեւ ամբողջական կերպով դրանց ուժի մեջ մտնելը, Մոսկվան հասցրած կլինի միլիարդներ կուտակել եւ շուկայի վերաբաշխման հասնել:

Որդուս ընկերուհին. բրիտանական նոր սերիալ

Լոնդոն, մեր օրեր. պատկերասրահի սեփականատեր Լորա Սանդերսը, որի կերպարը մարմնավորել է անկրկնելի Ռոբին Ռայթը, ոչինչ չի խնայի հանուն որդու՝ Դենիելի (Լորի Դեւիդսոն): Որդին Լորայի կյանքի իմաստն է ու աշխարհի կենտրոնը: Նույնը կարելի է ասել նաեւ Լորայի ամուսնու՝ Հովարդի մասին (Վալիդ Զուեյթեր): Չէ՞ որ նրանց երկրորդ երեխան՝ դուստրը, մանուկ հասակում մահացել է, եւ Դենիելը նրանց միակ հույսն է: Լորան եւ Հովարդն ունեւոր լոնդոնցիներ են: Դենիելը պատրաստվում է ծնողներին ներկայացնել ընկերուհուն՝ Չերիին (Օլիվիա Կուկ), որի հետ «ամեն բան լուրջ է»: Սակայն Չերին դասակարգային առումով իրենց հավասար չէ: Ու թեեւ 21-րդ դարի երկրորդ տասնամյակն արդեն կիսվել է, բայց նրանց մտածողությամբ՝ դասակարգային տարբերություններ կան, ինչպես 19-րդ դարում՝ Վիկտորյանական դարաշրջանում: Լորան առանձնապես լավ չի տրամադրված այդ հանդիպմանը, եւ երբ Չերին ներկայանում է «իր ողջ շուքով ու փայլով», մոր մտավախությունները հաստատվում են. աղջիկը թեեւ թանկ հագուստ է կրում, բայց այդ հագուստը շատ վուլգար է, իրենց խավին ոչ հարիր: Բացի այդ՝ պահվածքն ու շարժուձեւը վատն են, աղջիկը նորմալ չի կարողանում զրուցել, իրեն պահել լեդիի նման ու, բացի այդ էլ, կրում է ապարանջան, որը վերջերս հենց Լորան էր կորցրել: Սերիալը միանգամից փոխում է ռակուրսը, ու նույն հանդիպման ընթրիքը հիմա էլ ներկայացվում է Չերիի աչքերով: Աղջիկը պատրաստվում է ամենայն ջանասիրությամբ, որ դուր գա ընկերոջ ծնողներին, գնում է թանկ զգեստ, սակայն հենց շեմին լսում է, թե Լորան ու ընկերուհին ինչպես են քննարկում իրեն եւ ծիծաղում իր անվան վրա: Ու որպեսզի համապատասխանի ընկերոջ ընտանիքի կարգավիճակին, ստում է ու փոխանակ ասելու, որ սովորական դպրոցում է սովորել, ասում է, որ թանկարժեք կրթական հաստատություն է հաճախել, հայրն էլ «լավ գործի» է եւ ոչ թե հասարակ շինարար:

Սերիալը հիանալի տեղավորվում է ներկայում թրենդային համարվող սոցիալական անհավասարության քննարկումների շրջանակում, որոնք սկսվել էին դեռ «Մեծ փոքր սուտ»-ում (2017) եւ ներկայում էլ շարունակվում է ակտիվորեն առաջ մղվել «Սպիտակ լոտոս»-ում (2021)՝ արդեն երեք սեզոն: Սերիալի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ կարողանում է շատ վարպետորեն միեւնույն իրադարձությունը ներկայացնել տարբեր դիտակետերից՝ դիտողին ստիպելով, որ ապրումակցի մեկ հերոսուհիներից մեկին, մեկ՝ մյուսին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բազմավաստակ ուսուցչուհին կամավոր ատեստացիայից 4 անգամ «կտրվել» է

ՑԱՅԱԾ

Այս տեղեկությունը ցնցել է գյուղի բնակիչներին: Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից մեկի քիմիայի բազմավաստակ ուսուցչուհին 4-րդ անգամ է «կտրվել» կամավոր ատեստացիայից: Փորձառու ուսուցչուհին, որը շատ հարգված է իր աշխատավայրում՝ միջնակարգ դպրոցում, նաեւ գործընկերների՝ քիմիայի ուսուցիչների շրջանում, քանզի այդ ուսուցչուհու սաները տարիներ շարունակ բուհեր ընդունվելիս ցուցաբերել են հիմնավոր գիտելիքներ եւ քիմիայի քննությունից ստացել բարձր միավորներ, պարզվում է՝ չի բավարարում ատեստացիա անողների պահանջները: Դպրոցի տնօրենը, որտեղ աշխատում է բազմավաստակ ուսուցչուհին, մեզ հետ զրույցում ասում է, որ փորձառու, կենսաթոշակի տարիքի ուսուցչուհին առաջին անգամ մասնակցել է կամավոր ատեստացիայի գործընթացին եւ ատեստացիայից բացասական արդյունք ունենալով՝ ստիպված է եղել մասնակցել ատեստացիայի հաջորդ փուլերին: Վերջին անգամ նա ատեստացիային մասնակցել է էլեկտրոնային եղանակով, ինչը դժվարություն է տարեց կնոջ դեպքում, ու նաեւ դա է եղել կտրվելու պատճառը: Դպրոցի տնօրենը մեզ խնդրեց հարգել բազմավաստակ ուսուցչուհու տարիների նվիրյալ աշխատանքը ու չհանրայնացնել նրա անունը:

Դպրոցի տնօրենն ասաց նաեւ, որ պաշտոնապես չի ծանուցվել ատեստացիայից քիմիայի ուսուցչուհու 4-րդ անգամ «կտրվելու» մասին, հետաքրքրվեց, թե որտեղից եմ տեղեկացել այդ մասին: Օրերս Տավուշի մարզի քիմիայի ուսուցիչների 9 հոգանոց խմբից կամավոր ատեստացիան հաջողությամբ անցել է ընդամենը 4-ը: Տավուշի մարզպետի աշխատակազմից տեղեկացա, որ 2025թ. հոկտեմբերի 27-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական 76 դպրոցում աշխատում է 1634 ուսուցիչ, որոնցից ատեստավորված է ընդամենը 283-ը: Այսինքն՝ 4 տարում, 2021-2025 թվականներին Տավուշի հանրակրթական դպրոցների ուսուցիչների միայն 17 տոկոսն է հաջողությամբ կամավոր ատեստավորվել:

2025թ. սեպտեմբերի 23-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հարցում էի արել հանրապետության հանրակրթական դպրոցների կամավոր ատեստավորված ուսուցիչների թվի մասին: Սակայն ԿԳՄՍ նախարարությունից ստացված պատասխանում ներկայացվել են 2024 թվականի տվյալները. «Վերջին 4 տարիների ընթացքում անցկացված կամավոր ատեստավորման արդյունքում 2024 թվականի տարեվերջի դրությամբ արդեն 6 հազար 321 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 20%-ն ունի բարձրացված դրույքաչափով աշխատավարձ: Կամավոր ատեստավորմանն առաջին անգամ մասնակցողների թիվը 2024 թվականին ընդհանուր հայտագրվողների նկատմամբ եղել է ամենաբարձրը՝ 56,7%»: Սակայն նախարար Ժ. Անդրեասյանը պարբերաբար մեծ հպարտությամբ է խոսում կամավոր ատեստացիայի գործընթացի այս առավել քան համեստ արդյունքների մասին: Մյուս կողմից էլ, կամավոր ատեստացիան հաջողությամբ անցնելը ինքնին չի վկայում այդ ուսուցիչների մասնագիտական բարձր որակավորման մասին: Ատեստացիայի ժամանակ թեստերի հարցերին պատասխաններ են տրվում, եւ ստուգվում են նրանց գիտելիքները, սակայն ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը որոշվում է շատ այլ չափանիշներով՝ դասարանը կառավարելու, դասաժամը ճիշտ տնօրինելու, աշակերտների հետ հաղորդակցության, նրանց հետ անհատական աշխատանք կատարելու, մանկավարժական հոգեբանության գաղտնիքներին տիրապետելու ունակություններով եւ բազում այլ հմտություններով ու որակներով: Ուսուցիչները զգուշավոր են վերաբերվում կամավոր ատեստացիայի գործընթացին, որովհետեւ ձախողվելու դեպքում նրանց վարկանիշը, բարի համբավը տուժում է՝ գործընկեր մանկավարժների, աշակերտների ու ծնողների մոտ:

Օդում կախված լուրերի համաձայն՝ ուսուցիչները կամավոր ատեստացիայի թեստերի պատասխանները ոչ պատահական կերպով երբեմն հայտնվում են կամավոր ատեստացիայի մասնակից ուսուցիչների մոտ, այդ պատասխանները ստանալու համար անգամ գումարի չափ է շրջանառվում՝ 400 հազար դրամ: Էլի օդում կախված լուրերի համաձայն՝ Հայաստանում համատարած հեռախոսային գաղտնալսումների հետ կապված, բռնվելու վտանգի պատճառով, այդ գումարի չափը հիմա կրկնապատկվել է: Կարծում եմ, որ ծուխն առանց կրակ չի լինում՝ հանրապետության դպրոցներում իրենց գիտելիքներով աչքի չընկնող ուսուցիչներ կան, որոնց մասին նրանց գործընկերներն ասում են՝ ախր, նա ինչպե՞ս է հաղթահարել կամավոր ատեստավորումը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Նիկոլ Փաշինյանի սցենարը տապալվել է

«Հրապարակը» գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի եւ նրա կնոջ նախաձեռնությամբ Երեւանում նոյեմբերի 14-ին եւ 15-ին տեղի է ունենալու աղոթք-նախաճաշ՝ Christian Prayer Breakfast, որի հիմնական հյուրերն արտասահմանցիներ են: Նոյեմբերի 14-ին նախ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության եւ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի համագործակցությամբ Երեւանում կազմակերպվել էր «Խաղաղության խաչմերուկ. զարգացնելով տարածաշրջանային հաղորդակցությունները եւ համագործակցությունը» խորագրով միջազգային համաժողով, որի ժամանակ ելույթով հանդես եկավ Նիկոլ Փաշինյանը՝ հիմնականում խոսելով Թրամփի ուղղու մասին:

Իսկ բուն աղոթքի նախաճաշը կայանալու է այսօր՝ «Արմենիա Մարիոթ» համալիրում: Որից հետո Փաշինյանի հյուրերը, որոնք, ըստ կազմակերպիչների, ժամանել են 150 երկրից, այցելելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եւ Վեհափառն էլ ընդունելու է նրանց մի մասին:

Սակայն պարզվում է՝ երեկ ամեն ինչ Փաշինյանի ծրագրած սցենարով չի ընթացել: Միջոցառման առաջին օրը ԱՄՆ-ից ժամանած հայ եպիսկոպոս Դանիել Ֆինդիկյանը մասնակիցներին հիշեցրել է, որ իր երեք հոգեւորական եղբայրները բանտում են, եւ թվարկել է նրանց անունները՝ արքեպիսկոպոսներ Բագրատ Գալստանյան, Միքայել Աջապահյան եւ եպիսկոպոս Մկրտիչ Պռոշյան: «Նրանք՝ բոլորը, բանտարկված են ՀՀ կառավարության կողմից»,- ասել է եպիսկոպոսը, ապա իր ելույթը հրապարակել X-ում:

Կրոնական ազատության հարցերով ԱՄՆ հանձնաժողովի փոխնախագահ Ասիֆ Մահմուդն էլ հայտարարել է, որ մտահոգված է Հայաստանում հոգեւորականների կալանավորման փաստից, եւ կոչ է արել իշխանություններին՝ հարգել պատշաճ ընթացակարգն ու ազատ արձակել հայ հոգեւորականներին:

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն **Տեր Եսայի քահանա Արթենյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասաց, որ այդ աղոթք-նախաճաշին մասնակցած Դանիել սրբազանը մասնակցել է եւ ասել է այն, ինչը որ այսօր մտահոգում է թե՛ եկեղեցուն, թե՛ բոլորիս: Հարցին, թե արդյո՞ք Դանիել սրբազանը Վեհափառի թույլտվությամբ է մասնակցել նախաճաշին, Տեր Եսային ասաց. «Ինքը որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ է մասնակցել»: Ինչ վերաբերում է Վեհափառի կողմից Փաշինյանի կազմակերպած միջոցառման հյուրերին ընդունելուն, Տեր Եսային ասաց. «Օտարերկրյա հյուրերը, ովքեր ցանկացել են Վեհափառի հետ հանդիպում, Վեհափառն ընդառաջել է նրանց խնդրանքին»: Իսկ ինքը՝ Փաշինյանը, այցելելո՞ւ է Էջմիածին, Տեր Եսային ասաց, որ տեղյակ չէ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ՇԱՏ ԲԱՆ ՉԿԱ ԱՅԴ ՌՈԲՈՏ ՇՆԵՐԻ ՄԵՋ

ԱՄՆ 43-րդ նախագահ Ջորջ Բուշ կրտսերի՝ Ռուսաստանի եւ Եվրասիայի հարցերով նախկին օգնական Թոմաս Գրեհեմը News.am-ի հետ զրույցում նշել էր, որ ԱՄՆ-ն շահագրգռված է նրանով, ինչ տեղի է ունենում մեր տարածաշրջանում, եւ ակտիվորեն ներգրավված է այստեղ, բայց կա ռազմական գործողությունների վտանգ: «Հրապարակն» այս թեմաների շուրջ զրուցել է քաղաքագետ **Արա Պողոսյանի** հետ:

- Ինչպե՞ս հասկանալ Բուշի օգնականի մտահոգությունը, երբ Փաշինյանն ակտիվորեն խաղաղության օրակարգն է առաջ տանում, սակայն Բաքվում ռազմական շքերթ է տեղի ունենում, որի ժամանակ ցուցադրվում է պատերազմի պատրաստ վիճակ:

- Բաքուն ո՛չ այսօր, ո՛չ երեկ եւ ո՛չ էլ նույնիսկ վաղը չի թաքցրել եւ չի թաքցնում իր հավակնությունների շրջանակը: Ընդհակառակը՝ Բաքուն կոշտ ուժի գործադրմամբ հասնելով այս փուլում իր պլան մաքսիմումին, հիմա փորձելու է փափուկ ուժի միջոցով հասնել հաջորդ էտապի համար իր պլան մաքսիմումին: Այս պլան մաքսիմումը հանգում է նրան, որ Հայաստանը զրկվի ռազմավարական նշանակության ենթակառուցվածքներից, ռազմավարական նշանակության հնարավորություններից եւ հասնի մի վիճակի, երբ արդեն Հայաստանի իշխանությունները հատած կլինեն անդառնալիության կետը: Դա այն կետն է, երբ էլ չզիջելը որեւէ բան կկորցնի իր իմաստը, որովհետեւ նախորդիվ դու զիջել ես արդեն քո բոլոր կենսական ենթակառուցվածքները, հնարավորությունները, դիմադրության ներուժը: Ոչ միայն Միացյալ Նահանգներից, այլեւ տարբեր փորձագետներ են խոսում հնարավոր հակամարտության նորից սրացման կամ հակամարտության փոխակերպման այլ ձեւերի մասին: Սա իրականում բավականին պրագմատիկ է, եթե հաշվի առնենք, որ, այսպես կոչված, խաղաղության օրակարգը ոչ թե իրական խաղաղություն, ասել է թե՝ ժողովուրդների միջեւ խաղաղություն ու բարիդրացիություն հաստատելու ռազմավարություն է, այլեւ էլիտաների միջեւ պայմանավորվածություններ: Հատկապես իշխող էլիտաների միջեւ պայմանավորվածություններ, իսկ իշխող էլիտաների միջեւ պայմանավորվածություններն անընդհատ կարող են փոխակերպվել, հատկապես՝ կապված երկրներից մեկում իշխանության փոփոխության հետ: Օրինակ, Միացյալ Նահանգներում եթե ինչ-որ պահի տեղի ունենան շահերի փոփոխություններ, ինչ կլինի Հարավային Կովկասում ամերիկյան քաղաքականության հետ: Սա այս պահին կանխատեսելի չի կարող լինել Հայաստանի իշխանությունների համար, որոնք ցույց են տվել, որ չունեն ռազմավարական կանխատեսման որեւէ կրիտիկական ենթակառուցվածք կամ հնարավորություն: Հայաստանի իշխանությունները, մտնելով այս խաղի մեջ, գործնականում Հայաստանը հասցրել են մի հանգրվանի, որտեղ խախտված է բալանսը, որտեղ արդեն մենք մոտ ենք բոլոր անդառնալիության կետերն անցնելուն:

- Ո՞րը կլինի այդ վերջին հանգրվանը:

- Թերեւս դա կլինի այն, որ, այսպես կոչված, անկլավների հարցը մտնի իր եզրափակիչ փուլը:

- Այսինքն՝ Զանգեզուրի միջանցքն այն անդառնալի կետը չէ, ինչպես Տիգրանաշենի հանձնումը կարող է լինել:

- Եթե, այսպես կոչված, զանգեզուրյան միջանցքի հարցում մենք այս պահին ունենք մանեւրելու հնարավորություն, ապա, օրինակ, Տիգրանաշենի հանձնման պարագայում մենք այլեւս չենք ունենա մանեւրելու հնարավորություն: Սա այն կրիտիկական, ռազմավարական նշանակության կետն է, որից այս կամ այն կողմ արդեն իմաստը կկորցնի զիջումներ չանելը: Սա է Ադրբեջանի ռազմավարական նպատակը՝ Հայաստանին հասցնել այդ անդառնալիության կետին, որից հետո արդեն, հանուն խաղաղության, Հայաստանի ցանկացած իշխանություն արդեն ոչ թե կցանկանա, այլ ստիպված կլինի գնալ այս կամ այն զիջումներին:

- Իսկ եթե Նիկոլ Փաշինյանի իշխանությունը փոխվի ազգային շահով առաջնորդվող իշխանությամբ, այլընտրանք կստեղծվի՞, թե՞ ստիպված կլինեն շարունակելու Փաշինյանի գիծը:

- Առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ հնարավորություն չեն ունենա՝ կուտակելու դիմադրության անհրաժեշտ ռեսուրսներ, կարծում եմ, այո, ստիպված կլինեն շարունակել այն գիծը, որը գոնե հնարավորություն կտա Հայաստանին՝ վերականգնել խախտված բալանսը: Նույնիսկ այդ պարագայում դժվար է պատկերացնել, թե թշնամու ամբողջական եւ տոտալ վերահսկողության պայմաններում ինչպես են կարողանալու վերականգնել այդ կորսված բալանսը: Ընդ որում՝ միայն ռազմական բալանսի մասին չէ խոսքը, այլեւ ենթակառուցվածքային, տնտեսական, ռազմական, ֆինանսական, ներհասարակական եւ այլն:

- Ռոբոտ շներով եւ ռոբոտ կատուներով Փաշինյանը կկարողանա՞ հասարակությանը հավատացնել, որ նոր տեխնոլոգիաներով ու զինատեսակներով են համալրում բանակի զինանոցը:

- Միշտ կգտնվեն մարդիկ, ովքեր կցանկանան հավատալ, կցանկանան իրենց ներշնչել, որ ամեն ինչ լավ է լինելու, իսկ այդ ռոբոտ շները կարծեք թե հենց այդ լավատեսության վերջին հանգրվանն են, որտեղ մարդիկ կարող են իրենց մխիթարել, թեպետ մխիթարելու այդպես շատ բան ես չեմ տեսնում ռոբոտ շներով: Ընդհանրապես, ռազմական արվեստին եւ ռազմական գործին տեղյակ մարդիկ, կարծում եմ, ուղղակի կծիծաղեն:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 15.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՄՈՒՍԻՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ԿՆՈՋ

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Սեդրակ Քոչարյանը, հոկտեմբերի սկզբին քաղաքացիական հայց էր ներկայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազության: Հայցադիմումի պահանջում նշված է. «Անմեղության կանխավարկածի խախտումը ճանաչելու եւ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի մասին»:

Քոչարյանի ներկայացուցիչ Հայկ Ալումյանն այդ ժամանակ մեզ ասել էր, որ Գլխավոր դատախազությունից, այսինքն՝ պետությունից, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ պահանջում են 2 միլիոն դրամ: «Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ քրեական գործը քննչական մարմիններն ուղարկել են դատարան, եւ այդ ընթացքում դատախազությունը Հանրայինի եթերում արել է այնպիսի հայտարարություններ, որոնք ունկնդրի մոտ տպավորություն կարող են ստեղծել, որ Սեդրակ Քոչարյանի մեղքը հաստատված է, կատեգորիկ ձեւով հայտարարություններ են արել, որ Սեդրակ Քոչարյանը կատարել է իրեն վերագրվող արարք»,- նշել էր Ալումյանը:

Երեկ տեղեկացանք, որ դատարանը (դատավոր Երեմ Եսոյանի նախագահությամբ) հայցը ետ է վերադարձրել հայցվորին՝ փոքր վրիպակների առկայության պատճառաբանությամբ, կողմը նոր հայց է ներկայացրել դատարան, որը մակագրվել է Արմենուհի Բադիրյանին: Վերջինս հայցվորի ներկայացուցիչ Հայկ Ալումյանի կինն է:

Փաստաբանը մեզ ասաց, որ հայցը կրկին ներկայացրել են դատարան, իսկ թե ինչու է մակագրվել իր կնոջը, եւ վերջինս պե՞տք է ինքնաբացարկ հայտնի, ասաց. «Համակարգն է մակագրել, չեմ ուզում կարծել, որ դա դիտավորյալ ինչ-որ մեկի սադրանքն է, ես հուսով եմ, որ դա մակագրման հետեւանք է: Ենթադրում եմ՝ համապատասխան դրսեւորում կլինի»: Նկատի ունի՝ այլ դատավորի կմակագրեն, որովհետեւ այստեղ կա շահերի բախում, եւ տիկին Բադիրյանը չի կարող ամուսնու ներկայացրած հայցը քննել:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Դեբեդի հովտում կորոյոկի հիվանդություն է տարածվել՝ ռախիտ

Դեբեդի հովտի այգեգործներն ասում են, որ այս տարի արքայանարնջի՝ կորոյոկի լավ բերք է ստացվել, սակայն բերքի իրացման գործում մեծ դժվարություններ կան: Միրգը սովորաբար եկել են, հենց տեղում հավաքել, ապա այն Ռուսաստան արտահանողներ են եղել, նաեւ Հայաստանի շուկաներում են իրացրել, իսկ այս տարի քիչ են: Միջին չափերի կորոյոկը գյուղացիներից ընդունում են մեկ կիլոգրամը 120-130 դրամով, խոշոր չափերի կորոյոկը՝ 150 դրամով: Քանի որ բերքը վատ է իրացվում, շատերն այս տարի կորոյոկից չիր են սարքում, որը, ի դեպ, բավականին բարձր արժեք ունի շուկայում՝ կիլոգրամը մոտ 10 հազար դրամ, կամ օղի են թորում: Բայց ամենավատն այն է, որ այս տարի մի ուրիշ պատուհաս էլ է գյուղացիների դռանը չոքել՝ տարածվել է կորոյոկի նոր հիվանդություն, որը պտղաբույծները կորոյոկի ռախիտ են կոչում: Նոյեմբերյան համայնքի Դեղձավան գյուղի պտղաբույծները մեզ հայտնեցին, որ բերքի 60-70 տոկոսն այս տարի այդ հիվանդությամբ վարակված է: Գյուղատնտեսական երկիր Հայաստանում քանի որ գյուղնախարարություն չկա, էկոնոմիկայի նախարարության կազմում այժմ գյուղատնտեսությամբ զբաղվող մի քանի վարչություն է գործում, ուստի գյուղի եւ գյուղացու հոգսով զբաղվողներ էլ չկան: Ղազախստանից օրերս ստացված անասնակեր, անորակ ցորենի վագոնները մեծ ցնծությամբ դիմավորող էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, որ անձամբ էր եկել հասել երկաթուղային Այրում կայարան, կարող էր իրեն մի քիչ նեղություն տալ՝ Այրում կայարանից մոտ 15-20 կմ ճանապարհ անցնել եւ ծանոթանալ Դեղձավանի, Պտղավանի, Բագրատաշենի, Դեբեդավանի գյուղացիների հետ, զրուցել, հետաքրքրվել, թե ինչ հոգս ու ցավ ունեն, հարցնել, թե ինչով կարող է պետությունն օգնել նրանց, որ այգիներում աճեցված բերքի իրացումն ապահովվի, կամ ժամանակին կարողանան կանխել ու պայքարել կորոյոկի նորահայտ հիվանդության դեմ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am